ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» Դեկտեմբեր 2019 թվականի N 4/2

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ>> ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ առողջապահության նախարարության <<Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման նկատմամբ հաշվեքննության արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2019թ. մարտի 5-ի թիվ 4/2 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/14, օգոստոսի 6-ի թիվ 6/4, հոկտեմբերի 4-ի թիվ 11/2, հոկտեմբերի 30-ի թիվ 14/8, նոյեմբերի 12-ի թիվ 15/5, դեկտեմբերի 12-ի թիվ 19/11 և դեկտեմբերի 28-ի թիվ 21/4 որոշումներ:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ առողջապահության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ:
Հաշվեքննության առարկան	Վարկային և դրամաշնորհային ծրագրեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2019 թվականի մարտի 29-ը ներառյալ: Զննման և դիտարկման ընթացակարգերի իրականացման ժամկետը՝ 2018 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 29-ը ներառյալ:
Հաշվեքննության տեսակներ	Իրականացվել է համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն:
Հաշվեքննության ընթացակարգեր	Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Ի. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենին.

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ ԱԾԻԳ) կողմից 2017 թվականի և 2018թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ժամանակահատվածի ընթացքում իրականացված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 17.05.2013թ. ստորագրված թիվ 5222-ԱՄ համաձայնագրի հիման վրա իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման կատարողականը և համապատասխանությունը վարկային և դրամաշնորհային պայմանագրերին:

Ղեկավարության պատասխանատվությունը

ԱԾԻԳ-ի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում՝ վարկային և դրամաշնորհային միջոցների պայմանագրի դրույթների համաձայն տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման համար:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործումը զերծ է էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ աուդիտորական ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի հետևանքով վարկային և

դրամաշնորհային միջոցների օգտագործման էական անհամապատասխանությունների ռիսկերի գնահատումը: Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք գտնում ենք, որ ձեռք են բերվել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Վերապահումով կարծիքի հիմքեր

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության I. բաժնի 1-ին կետում, հաշվեքննության ժամանակահատվածում Ծրագրի շրջանակներում ԱԾԻԳ-ի կողմից կազմակերպված և անցկացված մրցույթները չեն համապատասխանել «Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎՀՄԲ փոխատվությունների և ՄՀԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակում կատարվող ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցի» (այսուհետ՝ ՀԲ Ուղեցույց) 1.2-րդ կետով սահմանված Ծրագրի իրականացման (ա) և (բ) ենթակետերի սկզբունքներին: Նշված անհամապատասխանությունների բացակայության դեպքում Ծրագրի միջոցների տնտեսումը գնահատվել է 184,441.6 հազ. դրամ:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության I. բաժնի 2-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում Ծրագրի շրջանակներում ԱԾԻԳ-ի կողմից կազմակերպված և անցկացված մրցույթները չեն համապատասխանել ՀԲ Ուղեցույցի 1.2 կետով սահմանված Ծրագրի իրականացման (ա) և (դ) ենթակետերի սկզբունքներին: Նշված անհամապատասխանությունների բացակայության դեպքում Ծրագրի շրջանակներում ձեռք բերված 167 անվանում ապրանքների ձեռք բերման և մատակարարման գների տարբերությունը 847,169.0 հազ. դրամի կամ 63.3%-ի փոխարեն կարող էր լինել մի քանի անգամ ավելի փոքր՝ խնայելով վարկային միջոցները, ինչպես նաև հանդիսանալ մատակարարման գործարքների ողջամիտ շահութաբերության ցուցիչ:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության I. բաժնի 3-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում Ծրագրի շրջանակներում ԱԾԻԳ-ի կողմից կազմակերպված գործընթացները չեն համապատասխանել ՀԲ Ուղեցույցի 1.2 կետով սահմանված Ծրագրի իրականացման սահմանված Ծրագրի իրականացման (ա) և (բ) ենթակետերի սկզբունքներին: Հայտնաբերված անհամապատասխանությունները վկայում են ԱԾԻԳ-ի կողմից իրականացրած գնման գործընթացների ոչ պատշաճ կարգավորվածության մասին, ինչը խոչընդոտ է հանդիսացել մրցակցային հավասար

հնարավորություններ ընձեռելու միջոցով լավագույն գնային առաջարկը որոշելու և Ծրագրի վարկային միջոցները արդյունավետ ու խնայողաբար օգտագործելու հարցում:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության I. բաժնի 4-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում Ծրագրի շրջանակներում ԱԾԻԳ-ի կողմից կազմակերպված և անցկացված մրցույթները չեն համապատասխանել ՀԲ Ուղեցույցի 1.2 կետով սահմանված Ծրագրի իրականացման (ա) և (բ) ենթակետերի սկզբունքներին: Հաշվեքննության ընթացքում իրականացված վերլուծությունից պարզվել է, որ տեղի է ունեցել գնումների կենտրոնացում 2 մատակարարների մասով, որոնց բաժին է ընկել գնումների ընդհանուր ծավալի 69.6%-ը: ԱԾԻԳ-ի կողմից մրցակցության խրախուսման սկզբունքը բավարար չափով չի ապահովվել և Ծրագրի վարկային միջոցները արդյունավետ ու խնայողաբար օգտագործելու հարցում խոչընդոտ է առաջացել:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության I. բաժնի 5-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում Ծրագրի շրջանակներում ԱԾԻԳ-ի կողմից «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի համար ձեռք բերված և փոխանցված 276,176.1 հազ. դրամ ընդհանուր արժեքով բժշկական սարքավորումները փաստացի շահագործման չեն հանձնվել և Ծրագիրը չի համապատասխանել ՀԲ Ուղեցույցի 1.2 կետի (ա) ենթակետով սահմանված Ծրագրի արդյունավետ իրականացման սկզբունքին:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության I. բաժնի 7-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում Ծրագրի միջոցներից 99,789.0 հազ. դրամ լրացուցիչ ֆինանսավորում է տրամադրվել այնպիսի հետազոտությունների և բժշկական ծառայությունների իրականացմանը, որոնց համար ֆինանսավորում արդեն իսկ նախատեսված է եղել ՀՀ պետական բյուջեից: Ծրագիրը չի համապատասխանել ՀԲ Ուղեցույցի 1.2 կետի (ա) ենթակետով սահմանված Ծրագրի արդյունավետ և խնայողաբար իրականացման սկզբունքին:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության I. բաժնի 8-րդ կետում, հաշվեքննության ժամանակահատվածում ԱԾԻԳ-ի կողմից նախագծված և իրականացված վերահսկողությունը մշտադիտարկման միջոցով եղել է անարդյունավետ՝ պարունակելով մի շարք ռիսկեր: ԱԾԻԳ-ը չի ապահովել պատշաճ վերահսոկղություն և չի համապատասխանել ՀԲ Ուղեցույցի 1.2 կետի (ա) ենթակետով սահմանված Ծրագրի արդյունավետ և խնայողաբար իրակաանցման սկզբունքին:

Վերապահումով կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնի 7 պարագրաֆներում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, 2017 թվականի և 2018թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ժամանակահատվածի ընթացքում Ծրագրի վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործումը բոլոր էական առումներով

համապատասխանում է Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 17.05.2013թ. ստորագրված թիվ 5222-ԱՄ համաձայնագրի պայմաններին:

Լևոն Յոլյան՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
27 փետրվարի 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անհամապատասխանություն

2017-2018թթ. ընթացքում ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի կողմից կազմակերպված և անցկացված մրցույթներն առանձին չափաբաժիններով գնահատելու դեպքում կտնտեսվեր 184,441.6 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում համեմատվել են «Վանաձորի ԲԿ», «Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ների արդիականացման համար «սարքավորումների և կահույքի ձեռք բերում» կատեգորիայով 2017-2018թթ. ընթացքում անցկացված մրցույթների միևնույն լոտերի համար հայտ ներկայացրած կազմակերպությունների գնային առաջարկների առանձին չափաբաժինների միավորի գները և տեխնիկական բնութագրերը:

Վերլուծության արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

հազ. դրամ

Մրցույթ	Չափա-բաժիններ	Հաղթող կազմակերպություն-ների կողմից ներկայացված գնառաջարկների ընդհանուր գումարը	Ըստ չափաբաժինների նվազագույն գնառաջարկների ընդհանուր գումարը	Գնառաջարկների տարբերությունն ըստ լոտերի և չափաբաժինների
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ	68	797,204.3	781,027.5	16,176.8
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք	65	220,543.4	183,133.7	37,409.7
«Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ներ	93	740,795.7	609,940.6	130,855.1
Ընդամենը	**226**	**1,758,543.4**	**1,574,101.8**	**184,441.6**

Հետևանք

Եթե մրցույթների գնահատումը կատարվեր ըստ առանձին չափաբաժինների, ապա անցկացված երեք մրցույթներով կտնտեսվեր ևս ***184,441.6*** հազ. դրամ, այդ թվում՝ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացվան համար անցկացված մրցույթով՝ 16,176.8 հազ. դրամ, «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի մրցույթով՝ 37,409.7 հազ. դրամ, և «Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ների արդիականացման համար անցկացված մրցույթով՝ 130,855.1 հազ. դրամ: Քանի որ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացման համար բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների ձեռք բերման համար անցկացված մրցույթի Լոտ 3-ի համար հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, արդյունքում համեմատություն չի կատարվել և վերը նշված աղյուսակում երրորդ լոտը չի ներառվել: Լոտ 3-ի նախահաշվային արժեքը կազմել է 647,567.2 հազ. դրամ, մրցույթին հայտ է ներկայացրել և հաղթող ճանաչվել «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ և «Ֆրեզեն» ՀՁ ՍՊԸ կոնսորցիումը /համատեղ/, գնային առաջարկը կազմել է 644,428.8 հազ. դրամ:

Լոտերի ձևավորման պատշաճ հիմնավորումների բացակայությունը հանգեցրել է մրցույթին մասնակցելու համար կոնսորցիումներ ստեղծելու անհրաժեշտությանը

Մրցույթին «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացման համար Լոտ 1-ում և Լոտ 3-ում հաղթողներ են ճանաչվել կոնսորցիումներ ստեղծած մատակարար կազմակերպություններ: Տվյալ Լոտերի ձևավորման պատշաճ հիմնավորումների բացակայությունը հանգեցրել է մրցույթին մասնակցելու համար կոնսորցիումներ ստեղծելու անհրաժեշտությանը, ինչն իր հերթին գնումների իրականացման գործընթացում մրցակցության խրախուսման սկզբունքի ապահովման և ծրագրի բյուջեի տնտեսման նպատակին հասնելու հարցերում խոչընդոտ է հանդիսացել:

Առաջարկ

Հաշվարկային մեծ գին ունեցող Լոտի ձևավորումը բազմապատկում է մրցույթին մասնակցության խոչընդոտները, քանի որ ավելացնում է հնարավոր մասնակցի ֆինանսատնտեսական և գործունեությանը վերաբերող մրցույթին մասնակցելու իրավունքի պահանջները, որը նվազեցնում է պատվիրատուի համար ավելի լավ առաջարկություններ ստանալու հնարավորությունները:

Բժշկական սարքավորումների, պարագաների և բժշկական կահույքի միավորների նախահաշվային գները սահմանելիս հաշվի առնել նախորդ մրցույթներին հաղթող ճանաչված, ինչպես նաև մրցույթներում չհաղթած կազմակերպությունների կողմից ներկայացրած նվազագույն գնային առաջարկները:

2. ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԿԱՀՈՒՅՔԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Անհամապատասխանություն

2017թ. և 2018թ. ինը ամիսների ընթացքում ԱԾԻԳ-ի կողմից բժշկական հաստատություններին հանձնված բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների գները /առանց տեղափոխման, տեղադրման և ուսուցման ծախսերի/ համեմատվել են մատակարարների կողմից ձեռք բերված տվյալ բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների գների հետ: Համեմատությունը կատարվել է ԱԾԻԳ-ի կողմից հաշվեքննության ընթացքում տրամադրված մատակարար կազմակերպությունների մաքսային հայտարարագրերի և ՀՀ ՊԵԿ-ի 20.11.2018թ. թիվ ՀՊՄ-1140 գրությամբ ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված տեղեկատվության հիման վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են համեմատության արդյունքներն՝ ըստ բժշկական հաստատությունների:

հազ. դրամ

Բժշկական հաստատության անվանումը	«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ ծրագրով մատակարարված բժշկական սարքավորումներ		Ծրագրով «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մատակարարված և համեմատված բժշկական սարքավորումներ				
	Ընդհանուր քանակ	Ընդհանուր արժեքը	Համեմատված քանակ	Մատակարարված բժ. սարքավորումների, պարագաների և կահույքի ընդհանուր արժեքը	Ձեռք բերման գները ըստ ՊԵԿ տեղեկատվության	Բուժ. հաստատություններին մատակարարված և ձեռք բերման գների տարբերությունը	Տարբերությունը /%/
(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)=(5)-(6)	(8)=(7)/(6)x100
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ	104	1,439,552.3	74	1,365,779.0	851,338.6	514,440.0	60.4
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք	65	220,543.5	25	151,124.0	100,203.5	50,920.5	50.8
«Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ներ	93	758,384.5	68	669,669,1	387,861,3	281,807.8	72.7
ԸՆԴԱՄԵՆԸ	**262**	**2,418,480.3**	**167**	**2,186,572.1**	**1,339,403.4**	**847,168.3**	**63.3**

«Վանաձորի ԲԿ», «Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ների արդիականացման համար 2017-2018թթ. ընթացքում մատակարարվել են 262 անվանում 2,418,480.3 հազ. դրամի բժշկական սարքավորումներ, կահույք և պարագաներ /առանց տեղափոխման, տեղադրման և ուսուցման ծախսերի/:

Հաշվեքննության ընթացքում համեմատվել են 167 անվանում, գումարով՝ 2,186,572.1 հազ. դրամի բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների գները, մատակարարների կողմից ձեռք բերման գների հետ:

Համեմատության արդյունքները ներկայացնենք օրինակներով: Այսպես՝

1. «Հեմոդիալեզի սարքը և պարագաները» 15 հատ՝ «Ֆրեզեն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ՀՀ են ներմուծվել 62,322.5 հազ. դրամով, որոնք վերջինիս կողմից «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին են մատակարարվել 171,000.0 հազ. դրամով: «Ֆրեզեն» ՀՁ ՍՊԸ-ի ձեռք բերման և վաճառքի գների տարբերությունը կազմել է **174.4%:**
2. «Ջրի մաքրման կայանը հեմոդիալեզի սարքավորման համար» «Ֆրեզեն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ՀՀ է ներմուծվել 18,630.8 հազ. դրամով, որը վերջինիս կողմից «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին մատակարարվել է 41,700.0 հազ. դրամով: «Ֆրեզեն» ՀՁ ՍՊԸ-ի ձեռք բերման և վաճառքի գների տարբերությունը կազմել է **123.8%:**
3. «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կողմից 10.11.2017թ. մատակարարված «Լապարասկոպիկ հավաքածուն» 102,500.0 հազ. դրամի չափով /առանց տեղափոխման, տեղադրման և ուսուցման ծախսերի/ վերջինիս կողմից 30.10.2017թ. ձեռք է բերվել ՀՀ-ում գրանցված ընկերությունից 41,000.0 հազ. դրամով /առանց մոնիտորի/, նույն օրը՝ 30.10.2017թ. նույն ընկերությունը հավաքածուն ձեռք է բերել մեկ այլ ընկերությունից, 38,970.0 հազ. դրամով, վերջինս էլ նշված հավաքածուն ՀՀ է ներմուծել 28.03.2017թ-ին, որի մաքսային արժեքը կազմել է 23,243.3 հազ. դրամ: «Լապարասկոպիկ հավաքածուն» ՀՀ է ներմուծել 28.03.2017թ-ին, որի մաքսային արժեքը կազմել է 23,243.3 հազ. դրամ, իսկ մոնիտորը ներմուծվել է առանձին՝ 3,309.9 հազ. դրամով: «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին մատակարարվել է 102,500.0 հազ.դրամով կամ **259%** բարձրացված արժեքով:

«Լապարասկոպիկ հավաքածուն» «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին մատակարարվել է 259% բարձրացված արժեքով

Հետևանք

167 անվանում բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների ձեռք բերման և մատակարարման գների տարբերությունը կազմել է 847,169.0 հազ. դրամ կամ 63.3%:

Համեմատության արդյունքում պարզվել է, որ նշված 167 անվանում բժշկական սարքավորումները, կահույքը և պարագաները ձեռք են բերվել 1,339,403.4 հազ. դրամով: Ձեռք բերման և մատակարարման գների տարբերությունը կազմել է 847,169.0 հազ. դրամ կամ 63.3%: Համեմատության ընթացքում ընտրանք չի կատարվել, համեմատությունը կատարվել է համատարած կարգով՝ ներկայացված տեղեկատվության սահմաններում:

Առաջարկ

Հաշվի առնելով բժշկական սարքավորումների ձեռք բերման և մատակարարման գների մեծ տարբերությունը, միջոցառումներ ձեռնարկել տվյալ տարբերությունները նվազեցնելու ուղղությամբ՝ բանակցելով ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ:

3. 2017Թ.-ԻՆ ԵՎ 2018Թ. ԻՆԸ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏԱԿԱՐՎԱԾ ՆՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ԳՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Անհամապատասխանություն

2018թ.-ի ինը ամիսների ընթացքում «Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ների համար մատակարարված բժշկական սարքավորումների միավորի գները համեմատվել են «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի միևնույն տեխնիկական բնութագրերով 2017թ. մատակարարված բժշկական սարքավորումների միավորի գների հետ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են վերը նշված բժշկական հաստատություններին մատակարարված սարքավորումների միավորի գների համեմատության օրինակներ, որտեղ նախորդ բժշկական հաստատությանը մատակարված սարքավորման միավորի արժեքը չի հանդիսացել հաջորդ բժշկական հաստատությանը մատակարարված սարքավորումների համար նախահաշվային միավորի արժեք, ինչպես մեզ ներկայացրեց ԱԾԻԳ-ի բժշկական սարքավորումների գծով խորհրդատուն:

հազ. դրամ

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ /2017թ./			«Սևանի ԲԿ» ՓԲԸ և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ /2018թ./		
Ապրանքի անվանումը	**Նախահաշվային միավորի արժեքը**	**Գնված միավորի արժեքը**	**Ապրանքի անվանումը**	**Նախահաշվային միավորի արժեքը**	**Գնված միավորի արժեքը**
Սեղանի ավտոկլավ // Autoclave Table-top Model: MS-TD50D, Shinova Systems Co. Ltd, China	1,800.0	1,900.0	Սեղանի ավտոկլավ // Autoclave Table-top - Model BKM-Z45B(III), Biobase Biodustry (Shandong) Co., Ltd, China	3,800.0	2,367.7
Վիրաբուժական արտածծիչ // *Suction pump - Model F-30.65, Fazzini S.R.L., Italy*	466.2	210.0	Վիրաբուժական արտածծիչ // Suction pump - Model: F-30.65, Fazzini Srl, Italy	384.5	356.0
Վիրաբուժական գործիքների հավաքածու // *Operation instrument set - GSK MIZ - VORSMA, RF*	1,100.0	2,600.0	Վիրաբուժական գործիքների հավաքածու // Operation instrument set - Model: Operation instrument set, GCS MIZ-VORSMA, Russia	1,103.6	2,178.0

Պացիենտի մոնիտոր *// Patient Monitor- MODEL: ARI-800B+ ARI Technology Group Co., Limited, China*	700.0	730.0	Պացիենտի մոնիտոր // Patient Monitor - Model: Moni 6E, Shinova Systems Co. Ltd., China	674.1	493.0
Ավտոմատ ներարկիչ *// Syringe pump - Model SP8800 AmpALL Co. Ltd, Korea*	370.0	442.0	Ավտոմատ ներարկիչ // Syringe pump - Model: SP-8800, AmpAll Co. Ltd, Korea	373.6	427.0
Թթվածնի կոնցենտրատոր *//Oxygen Concentrator - Model Kroeber 02 HEYER Medical AG Germany*	1,480.0	1,085.0	Թթվածնի կոնցենտրատոր //Oxygen Concentrator - Model: Kroeber 02, Heyer Medical AG, Germany	1,494.4	1,139.0
Օդի ռեցիրկուլյատոր *// UV-Air Flow Cleaner–Recirculators - Model ORB-1N Public Joint-Stock company " Production Association "ZavodimeniSergo" Russia*	110.0	180.0	Օդի ռեցիրկուլյատոր // Cleaner–Recirculators - Model: ORB-1N Joint-Stock Company "Production Association "Zavod imeni Sergo" (POZIS), Russia	139.0	130.0
Հետազոտման լամպ *// Examination Lamp Model 02.738.00 FazziniS.r.l., Italy*	77.0	76.0	Հետազոտման լամպ // Examination Lamp - Model: 02.738.00, Fazzini Srl, Italy	121.0	78.0
Մեծահասակների կշեռք *// Scale for Adults - Model S7200HR FazziniS.r.l., Italy*	159.0	185.0	Մեծահասակների կշեռք // Scale for Adults - Model: S7200HR, Fazzini Srl, Italy	211.0	180.0

Օրինակ՝

1. «Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ների համար անցկացված մրցույթի արդյունքում «Սեղանի ավտոկլավ» սարքավորումը 2017թ. ձեռք է բերվել 1,900,0 հազ. դրամով, սակայն 2018թ. նախահաշվում նշված սարքավորման արժեքը սահմանվել է 3,800,0 հազ. դրամ, որը ձեռք է բերվել 2,367,7 հազ. դրամով:
2. «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի համար անցկացված մրցույթի արդյունքում «Վիրաբուժական գործիքների հավաքածուն» 2017թ. ձեռք է բերվել 2,600.0 հազ. դրամով, սակայն 2018թ. նախահաշվում նշված հավաքածուի արժեքը սահմանվել է 1,103.6 հազ. դրամ, որը ձեռք է բերվել 2,178.0 հազ. դրամով:

Հետևանք

Վարկային միջոցների հաշվին ԱԾԻԳ-ի կողմից ձեռք բերված սարքավորումների գները չեն բավարարում արդյունավետության և խնայողության սկզբունքներին

Բժշկական հաստատություններին նախկինում մատակարարված սարքավորումների միավորի գները հաջորդող մրցույթների համար առանձին դեպքերում չեն սահմանվել որպես նախահաշվային գներ, որոնք էլ մրցույթի հաղթողին որոշելիս որևէ նշանակություն չեն ունենում: Գնումների գործընթացի այս մասը պատշաճ կարգավորված չէ և կոնկրետ նպատակի չի ծառայում: Արդյունքում վարկային միջոցների հաշվին ԱԾԻԳ-ի կողմից ձեռք բերված սարքավորումների գները չեն բավարարում ՀԲ ուղեցույցի 1.2 կետում արտացոլված արդյունավետության և խնայողության դրույթներին:

Առաջարկ

Վարկային միջոցների հաշվին գնումները կատարելիս առաջնորդվել գնումների գործընթացի կազմակերպման արդյունավետության և խնայողության դրույթներով:

Մեր առաջարկն է նաև, որ եթե ՀԲ ուղեցույցը կիրառելիս որևէ հարց կամ անհստակություն է առաջանում, ապա ԱԾԻԳ-ի ղեկավարությունը քննարկումներ ունենա ՀԲ և ՀՀ ԱՆ համապատասխան պաշտոնյաների հետ՝ գրավոր պարզաբանում կամ համաձայնեցում ձեռք բերելու նպատակով:

4. ՄՐՑՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անհամապատասխանություն

2015-2018թթ. ընթացքում ԱԾԻԳ-ի կողմից «Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում» բաղադրիչի շրջանակներում «Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն», «Մեղրու Տարածաշրջանային ԲԿ», «Ճամբարակի ԱԿ», «Վանաձորի ԲԿ», «Արտաշատի ԲԿ», «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ների արդիականացման համար բժշկական ախտորոշիչ սարքավորումների, բժշկական պարագաների և բժշկական կահույքի մատակարարման, տեղադրման և ուսուցման նպատակով կազմակերպվել և անցկացվել են միջազգային և ազգային մրցույթներ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2015-2018թթ. ընթացքում ԱԾԻԳ-ի կողմից կազմակերպված և անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպություններն իրենց գնային առաջարկներով:

Ըստ տարիների արդիականացված բժշկական հաստատության անվանումը	2015-2018թթ. ընթացում մրցույթներին մասնակցած և հաղթած կազմակերպությունների գնային առաջարկներն ըստ լոտերի			
	Ախտորոշիչ սարքավորումներ	**Լաբորատոր սրքավորումներ**	**Վիրաբուժական և հիվանդանո-ցային սարքավորումներ**	**Բժշկական կահույք**
«Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ 2015թ.	«Տելիա-Մեդ» ՓԲԸ 592,718.3 հազ. դրամ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ 285,919.0 հազ. դրամ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ (ՀՀ) և «Դիասերվ» ՍՊԸ 260,820.0 հազ. դրամ	«Ագաթ-777» ՍՊԸ և Մեդիմպեքս» ՍՊԸ 200,302.0 հազ. դրամ
«Մեղրու Տարածաշրջանային ԲԿ» ՓԲԸ 2016թ.	«Յունիմեդ հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ և «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» ՀՁ ՍՊԸ 108,799.0 հազ. դրամ	«Ռոմա» ՍՊԸ 26,155.0 հազ. դրամ	«Ար-Մեդտեխնիկա» ՍՊԸ և «Դիասերվ» ՍՊԸ 188,877.9 հազ. դրամ	«Զորաշեն» ՍՊԸ և «Մեդիմպեքս» ՍՊԸ 59,750.0 հազ. դրամ
«Ճամբարակի ԱԿ» ՓԲԸ 2016թ.			"Ար.Մեդտեխնիկա" ՍՊԸ 30,800.0 հազ. դրամ	
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ 2017թ.	«Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ և «Բժշկական սարքավորումներ և սպասարկում» ՀՁ ՍՊԸ	«Ռոմա» ՍՊԸ 37,055.0 հազ. դրամ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ և «Ֆրեզեն» ՀՁ ՍՊԸ 644,428.8 հազ. դրամ	«Ագաթ-777» ՍՊԸ 161,127.0 հազ. դրամ

	615,600.0 հազ. դրամ			
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք 2018թ.			«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ 166,572.4 հազ. դրամ	«Զորաշեն» ՍՊԸ 57,228.1հազ. դրամ
«Արտաշատի ԲԿ» և «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ներ 2018թ.	«Կոնցեռն- Էներգոմաշ» ՓԲԸ 251.052.0 հազ. դրամ	«Փինգ Ֆլամինգո Գ և Ա. Կենտրոն» ՍՊԸ 37.551.2 հազ. դրամ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ 288,135.6 հազ. դրամ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ և «Տ-Ինասթրի» 198,255.7 հազ. դրամ

2015-2018թթ. ընթացքում ԱԾԻԳ-ի կողմից միայն «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի արդիականացման համար է կազմակերպվել և անցկացվել ազգային մրցույթ, մնացած բոլոր դեպքերում կազմակերպվել և անցկացվել են միջազգային մրցույթներ և մրցույթներին որևէ այլ ընկերություն, որը ՀՀ-ում գրանցված չէ հաղթող չի ճանաչվել: Բացի վերը նշվածից, մրցույթներին մեծամասամբ հայտեր են ներկայացրել ՀՀ-ում գրանցված նույն կազմակերպությունները, ավելին՝ «***վիրաբուժական և հիվանդանոցային սարքավորումների»*** համար հայտեր ներկայացրած կազմակերպություն-ներից ամեն անգամ հաղթող է ճանաչվել «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն կամ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն որևէ այլ կազմակերպության հետ համատեղ:

Հետևանք

2015-2018թթ. ընթացքում ԱԾԻԳ-ի կողմից կազմակերպված և անցկացված միջազգային մրցույթներին մասնակցել և հաղթող են ճանաչվել հիմնականում նույն կազմակերպությունները և ոչ մի միջազգային կազմակերպություն:

Նշված ժամանակաշրջանում բժշկական սարքա-վորումների, պարագաների և կահույքի ձեռք բերման համար անցկացվել են 6 մրցույթներ՝ 19 լոտ-ով, որի արդյունքում հաղթող կազմակեր-պությունների հետ կնքվել են ընդհանուր 4,211,207.0 հազ. դրամի պայմանագրեր, որից «Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի կամ դրա հետ համատեղ մրցույթին մասնակցող կազմակերպութ-յունները հաղթել են 6 մրցույթների 6 լոտերում և կնքվել են 1,579,634.7 հազ. դրամի պայմանագրեր, իսկ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կամ դրա հետ համատեղ մրցույթին մասնակցող կազմակերպությունները հաղթել են 6 մրցույթների 4 լոտերում և կնքվել են

1,350,826.7 հազ. դրամի պայմանագրեր, միասին՝ 2,930,461.4. հազ. դրամի պայմանագրեր կամ ընդհանուրի 69.6%-ը:

Առաջարկ

Մրցակցության խրախուսման սկզբունքը չի ապահովվել և ծրագրի բյուջեի տնտեսման նպատակին հասնելու հարցերում խոչընդոտ է հանդիսացել

Վերլուծությունից պարզ է դառնում, որ առկա է գնման գործընթացների կենտրոնացում երկու կազմակերպությունների մասով, մրցակցության խրախուսման սկզբունքը չի ապահովվել և ծրագրի բյուջեի տնտեսման նպատակին հասնելու հարցերում խոչընդոտ է հանդիսացել:

Մեր առաջարկն է, ձեռնարկել միջոցներ մրցակցության խրախուսման սկզբունքը և բյուջեի տնտեսման նպատակն ապահովելու ուղղությամբ:

4. «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԿ» ՓԲԸ-ՈՒՄ 29.11.2018Թ-ԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհամապատասխանություն

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ում կատարվեց ԱԾԻԳ-ի կողմից ընկերությանը հանձնված բժշկական սարքավորումների և կահույքի գույքագրում: Ստորև ներկայացվում են գույքագրմամբ հայտնաբերված անհամապատասխանություններ:

1. «Շարժական ռենտգեն համակարգ»-ը /գումարով՝ 13,112.9 հազ. դրամ/ տեղում առկա էր: Համակարգի մաս կազմող նկարահանող սարքավորումը 2017թ.-ի արտադրության էր, իսկ տպող սարքը 2011թ. արտադրության էր:
2. Մատակարարված 10 հատ «Նեգատասկոպ» սարքավորումներն առկա էին: Նշված սարքավորումները չէին օգտագործվում, որոնցից տեղադրված էին 6 հատը, իսկ 4 հատը տեղադրված չէին: Ըստ պայմանագրի, յուրաքանչյուր սարքավորման միավորի գինը կազմել է 49.5 հազ. դրամ, տեղադրման ծախսը կազմել է 100.0 հազ. դրամ և ուսուցման ծախսը 25.0 հազ. դրամ:
3. «Անգիոգրաֆիայի համալիրը» /գումարով՝ 268,186.1 հազ. դրամ/ առկա էր, մինչև գույքագրման անցկացման օրը դեռևս չէր օգտագործվել համապատասխան մասնագետ չունենալու պատճառով: Սարքավորման ընդունման-հանձնման ակտը ստորագրվել է 04.04.2018թ.-ին:
4. «Էլեկտրոնեյրոմիոգրաֆը» /գումարով՝ 7,394.4 հազ. դրամ/ առկա էր, մինչև գույքագրման անցկացման օրը դեռևս չէր օգտագործվել համապատասխան մասնագետ չունենալու պատճառով: Սարքավորման ընդունման-հանձնման ակտը ստորագրվել է 05.04.2018թ.-ին:
5. Մատակարարված 15 հատ «Հեմոդիալեզի սարք և պարագաները», ընդհանուր գումարով 175,130.1 հազ. դրամ, առկա էին: Նշված սարքավորումներից երեքը տեղադրված չէին, գտնվում էին առանձնացված սենյակում: Տեղադրված չէին նաև սարքավորման մաս կազմող կշեռքները: Ըստ պայմանագրի, յուրաքանչյուր սարքավորման համար տեղափոխման ծախսը կազմել է 20.0 հազ. դրամ, տեղադրման ծախսը յուրաքանչյուրի համար 20.4 հազ. դրամ և ուսուցման ծախսը 27.0 հազ. դրամ:
6. Մատակարարված երեք «Հեռուստացույց պատի կախիչով՝ 43՝՝» ապրանքները, ընդհանուր արժեքով 543.9 հազ. դրամ, առկա էին: Նշված հեռուստացույցերից երկուսը տեղադրված չէին: Ըստ պայմանագրի, յուրաքանչյուր սարքավորման համար

տեղափոխման ծախսը կազմել է 1.0 հազ. դրամ, տեղադրման ծախսը՝ յուրաքանչյուրը 0.9 հազ. դրամ:

7. «Լապորասկոպիկ հավաքածու» /գումարով՝ 37,620.0 հազ. դրամ/ առկա էր, գտնվում էր մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքում, սակայն չէր օգտագործվում: Սարքավորման ընդունման-հանձնման ակտը ստորագրվել է 05.04.2018թ.-ին:

Հետևանք

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված 28 սարքավորումներից 9-ը ընկերությունում տեղադրված չէին /ընդհանուր գումարը՝ 595,6 հազ. դրամ

Գույքագրման օրվա դրությամբ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված երեք անվանում 28 հատ սարքավորումներից 9-ը ընկերությունում տեղադրված չէին, որոնց ընդհանուր գումարը կազմել է 595,6 հազ. դրամ: Ուշագրավ է, որ մատակարարներին չտեղադրված սարքավորումների համար, որպես տեղադրման և ուսուցման ծախս վճարվել էր 519.9 հազ. դրամ, որը կազմում է մատակարարված սարքավորումների 87.3%-ը:

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված «Անգիոգրաֆիայի համալիրը» /գումարով՝ 268,186.1 հազ. դրամ/ և «Էլեկտրոնեյրոմիոգրաֆը» /գումարով՝ 7,394.4 հազ. դրամ/, համապատասխան մասնագետ չունենալու պատճառով գույքագրման օրվա դրությամբ շուրջ 8 ամիս դեռևս չէին շահագործվել:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ՝ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված չտեղադրված սարքավորումներն ընկերությունում տեղադրելու ուղղությամբ, ինչպես նաև տեղադրված սարքավորումները շահագործելու ուղղությամբ:

5. «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԿ» ՓԲԸ-Ի ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԼՈՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Բժշկական սարքավորումների լոտերի ձևավորման, տեխնիկական բնութագրերի կազմման, ինչպես նաև հայտերով ներկայացված սարքավորումների բնութագրերի վերաբերյալ հաշվեքննություն իրականացնելու համար ՀՀ հաշվեքննիչ պալատի որոշմամբ ներգրավվել է փորձագետ:

Առաջին և երրորդ լոտերի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով ԼՈՏ-ի հաշվարկային մեծ գին ունենալու հանգամանքը: Փորձագետի կողմից ներկայացվել է եզրակացություն: Այսպես.

1. ԼՈՏ-երի ձևավորման վերաբերյալ: Առաջին և երրորդ լոտերում ընգրկվել են առանձնապես թանկարժեք, իրարից անկախ, բնութագրերով խիստ տարբերվող բժշկական սարքավորումներ: Այսպիսով, չհիմնավորված և միևնույն ժամանակ ձեռքբերման հաշվարկային մեծ գին ունեցող ԼՈՏ-ի ձևավորումը բազմապատկում է մրցույթին մասնակցության խոչընդոտները, քանի որ ավելացնում է հնարավոր մասնակցի ֆինանսա-տնտեսական և գործունեությանը վերաբերող մրցույթին մասնակցելու իրավունքի պահանջները, որը նվազեցնում է պատվիրատուի համար ավելի լավ առաջարկություններ ստանալու հնարավորությունները:

Եթե ԼՈՏ-3–ում առանձնացվեր «ջրի մաքրման կայանը», ապա հնարավոր է տնտեսվեր առնվազն 20 միլիոն դրամ

Օրինակ ԼՈՏ-3–ում, որին մասնակցել է ընդամենը մեկ հայտատու, եթե առանձնացվեր «ջրի մաքրման կայանը», ապա հայտեր կարող էին ներկայացնել մի քանի հայտատուներ, իսկ կայանը ձեռք կբերվեր շատ ավելի ցածր գնով: Մեծ հավանականությամբ հայտ կներկայացներ, օրինակ, АО «НПК МЕДИАНА-ФИЛЬТР», որը մասնագիտացված է դիալիզի բաժանմունքների համար ջրի մաքրման կայանների արտադրության, տեղակայման և սպասարկման բնագավառում, կտնտեսվեր առնվազն 20,000,000 դրամ:

2. Ապրանքների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ: Բոլոր տեխնիկական բնութագրերը պետք է լինեն բավարար հիմնավորված, տրամաբանական և խելամիտ:

Հետազոտումների համար ձեռք բերման ենթակա սարքերի վերաբերյալ պահանջների հիմնավորման գործընթացում պետք է հաշվի առնել տվյալ սարքի միջոցով հնարավոր հետազոտումների տեսակների անհրաժեշտությունը, պահանջարկը, ինչպես նաև ֆինանսական հետևանքները:

Հետազոտումների համար ձեռք բերման ենթակա սարքերի վերաբերյալ որոշ պահանջներ հիմնավոր չեն

Օրինակ,այս առումով LOS-1 «*Թվային ռենտգեն համալիր ունիվերսալ// Digital Universal X-Ray Unit*» սարքի վերաբերյալ հետևյալ պահանջի Tilt: Motor Driven: from +89^0 to -89^0, deviation not more than 10% automatic stop in horizontal position ներկայացումը բավարար հիմնավորված համարել դժվար է մի քանի պատճառներով: Նախ, ձևակերպումն անհեթեթ է՝ +89^0 to -89^0, deviation not more than /շեղումը ոչ ավելի քան/ 10% , այսինքն կարող է լինել +97^0 մինչև -97^0 և +80^0 մինչև -80^0 և սրանց հնարավոր կոմբինացիաները: Անիմաստ 97^0-ի դեպքում հետազոտվողը կարող է ընկնել սեղանից և վնասվել՝ եթե ամրակապված չէ /ամրակապիչների վերաբերյալ հստակ պահանջները բացակայում են/: 80^0-ը զուրկ է որևէ իմաստից: Բնական է, հետազոտման սեղանի այսպիսի շրջումներով ռենտգեն հետազոտման համալիրներ չեն արտադրվում: Արտադրվում են Tilt: Motor Driven: from +90^0 to -90^0 առանց որևէ իմաստազուրկ շեղումների /սեղանը հնարավոր պետք է լինի տեղակայել ուղղահայաց, հորիզոնական և միջանկյալ դիրքերում/: Ավելի լայն արտադրություն և կիրառություն ունեն +90^0 մինչև -≥17^0 (-17^0-պարտադիր սահմանափակում է կերակրափողի բարիումով որոշ հետազոտությունների համար), որոնք զգալիորեն էժան են՝ գների տարբերությունը առնվազն 50,000 եվրո: Ճիշտ է, այդ համալիրների սեղանների բարձրությունը կարգավորվող չէ, սակայն հետազոտվողին սեղանի վրա տեղակայելու խնդիրը լուծվում է անհամեմատ էժան միջոցներով: Ընդհանրապես, /-90^0/ գլխիվայր հետազոտությունները վտանգավոր են հետազոտվողների տարիքային մեծ խմբի համար, պետք է կատարվեն առանձնահատուկ հիմնավորված դեպքերում, կարելի է ասել ընդհանրապես տարածված չեն Հայաստանում և կարող են կատարվել հետազոտվողին համապատասխան ուղությամբ՝ դիրքավորելով +90^0 շրջվող սեղանին: Ստամոքսի մինչև -50^0 պահանջվող հետազոտությունները նույնպես անց են կացվում հետազոտվողին սեղանի համապատասխան կողմում դիրքավորումով:

Ի դեպ, նվազագույն գնով ներկայացված հայտում առաջարկվել է «Թվային ունիվերսալ ռենտգեն համալիր», որի սեղանը իրոք հնարավոր չէ տեղակայել ուղղահայց դիրքերով, սահմանափակված է +89^0 to -89^0 տիրույթով միայն արտադրողին հայտնի պատճառներով: Այսպիսի պահանջը շահագործողի կողմից ներկայացնելը բնական չէ, քանի որ +90^0 to -≥17^0 տիրույթում բոլոր արտադրվող համալիրների սեղանը կարելի է տեղակայել ցանկացած դիրքում 1^0 քայլերով: Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ այս անհեթեթ ձևակերպումներով բնութագիրը չի սահմանափակել մրցույթի մասնակցելու հնարավորությունները, հակառակը՝ հնարավորություն է ստեղծել մասնակցել մրցույթում նվազագույն գին առաջարկողին:

Հայաստանում բժշկական կենտրոնների արդիականացման ծրագրերում նախկինում ներկայացված է եղել +90^0 to -≥17^0 պահանջը, մատակարումները եղել են այդ պահանջներին բավարարող:

Բնութագրերի հստակությունը և լիարժեքությունը հատկապես կարևոր է առաջարկությունների գնահատման, ապրանքների ընդունման գործընթացներում և երաշխիքային ժամանակահատվածում մատակարարին հիմնավորված բողոքներ ներկայացնելու համար:

Այսպիսով, ԼՈՏ-երում ներկայացված բնութագրերում առկա են բազմաթիվ թերություններ՝ որոշ սարքերի համար ոչ հստակ ձևակերպումներ, ակնհայտ սխալ թվային արժեքներով ներկայացված պահանջներ, առկա են շահագործման իմաստով հետաքրքրություն չներկայացնող պահանջներ, պահանջներ են ներկայացված ընդհանուր արտահայտություններով, որոնք հնարավոր չէ գնահատել հայտերում, շատ դեպքերում պահանջները կցկտուր են, որոշ ապրանքների վերաբերյալ շահագործման իմաստով կարևոր բնութագրերի թվային պահանջներ չեն ներկայացվել, որոշ ապրանքների համար պահանջները ավելորդ մանրամասնություններով են ներկայացված, ուղղակիորեն արտագրված են արտադրողի բնութագրերից և այլն:

3. Հայտերով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ : ԼՈՏ-3 –ով ընդամենը մեկ հայտ է ներկայացվել, ինչը շատ երկրներում հիմք է ծառայում ԼՈՏ-ի ձևավորումը անբավարար հիմնավորված և չկայացած ճանաչելու համար:

Միակ հայտատուն առաջարկած ապրանքների բնութագրերը, եզակի բացառություններով, կրկնօրինակել է պահանջներից, կրկնելով անգամ բոլոր սխալ ձևակերպված պահանջները:

6.ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհամապատասխանություն

ՀՀ-ում ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունները ֆինանսավորվում են «ըստ գրանցված բնակչության թվաքանակի» սկզբունքով

Ուսումնասիրելով ՀՀ-ում գործող ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների ֆինանսավորման մեխանիզմը, պարզվում է, որ նշված կազմակերպությունները ֆինանսավորվում են «ըստ գրանցված բնակչության թվաքանակի» սկզբունքով: Համաձայն ՀՀ կառավորության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման /ինկորպորացիա ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1691-Ն որոշում/ 33-րդ կետի, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է առողջության առաջնային պահպանման (տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, դեռահասներին սպասարկող մասնագետի կողմից իրականացվող ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված բժշկական օգնության (բացառությամբ գյուղական բնակավայրերում ընտանեկան բժշկի գործառույթ իրականացնող կազմակերպությունների կողմից տրամադրվող մասնագիտացված բժշկական օգնության), գինեկոլոգիական բժշկական օգնության, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների (բացառությամբ հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության ընթացքում իրականացվող և գյուղական բնակավայրերում ընտանեկան բժշկի գործառույթ իրականացնող կազմակերպությունների կողմից իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների) մասով՝ ամսական կտրվածքով, տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության սպասարկման տարածքում տվյալ ամսում գրանցված անձանց թվով՝ տվյալ ծառայության համար սույն որոշմամբ սահմանված կարգով հաստատված՝ մեկ անձի հաշվով տարբերակված գներով: ՀՀ առողջապահության նախարարի 13.09.2013թ. թիվ 47-Ն հրամանի հավելված 1-ի 7-րդ կետի համաձայն, պետության կողմից երաշխավորված անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը տրամադրվող բժշկական օգնությունը և սպասարկումն ընդգրկում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ողջ ծավալը (ներառյալ՝ լաբորատոր-գործիքային հետազոտությունները բնակչության բոլոր խմբերի համար):

Հետևանք

Սքրինինգային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են նաև այնպիսի հետազոտություններ, որոնք ներառված են պետության կողմից անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման շրջանակներում

Վերոգրյալից պարզ է դառնում, որ սքրինինգային ծրագրով իրականացվող հետազոտությունների իրականացումը /բացառությամբ արյան (առանց լեյկոֆորմուլայի) և մեզի ընդհանուր քննության/ ընդհանուր առմամբ կազմում է բնակչությանը մատուցվող համալիր ծառայությունների մասը՝ ֆինանսավորվելով պետական բյուջեի միջոցներից: Մինչդեռ վերոգրյալ սքրինինգային հետազոտություններում ներառված տարիքային խմբի համար ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ իրականացնող կազմակերպությունները, իրականացված հետազոտությունների համար ֆինանսավորվում են նաև վերոնշյալ վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին՝ հետևաբար առաջացնելով լրացուցիչ ֆինանսավորում /2018թ. 9 ամիսների համար՝ 99,789.0 հազ. դրամ/:

Ստացվում է այնպես, որ եթե քաղաքացին դիմում է տեղամասային բժշկին որոշակի գանգատներով և նա համապատասխանում է սքրինիգային ծրագրով իրականացվող հետազոտությունների տարիքային խմբին, նշված քաղաքացու հետազոտությունն իրականացվում է այդ ծրագրի շրջանակում, մինչդեռ այդ հետազոտության իրականացումն ընդգրկված է նաև պետության կողմից անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման շրջանակներում:

Առաջարկ

Առաջարկում ենք վերանայել սքրինինգային ծրագրի շրջանակներում իրականացվող հետազորությունների ֆինանսավորման մեխանիզմները կամ ֆինանսավորել այնպիսի հետազոտություններ, որոնք ներառված չեն պետության կողմից անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման շրջանակներում:

8. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհամապատասխանություն

ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում պայմանագրային հիմունքներով աշխատող անհատ խորհրդատուների աշխատանքային պարտականությունների մեջ է մտնում սքրինինգային ծրագրով իրականացվող հետազոտությունների նկատմամբ վերահսկողության իրականացումը մշտադիտարկման միջոցով: Վերջինս իրենից ներկայացնում է E-health համակարգ մուտագրված տվյալների վերանայում, կրկնությունների բացառում, ինչպես նաև այցելություններ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ իրականացնող կազմակերպություններ՝ քարտերի վերանայման և սխալների հայտնաբերման նպատակով: E-health համակարգը գործարկվել է 2017թ. մայիսի 1-ից: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ նշված գործառույթներ իրականացնող անհատ խորհրդատուների կողմից E-health համակարգից դուրս գրված հետազոտված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը մինչև տվյալ կազմակերպություն այցելելը ուղարկվում է տվյալ կազմակերպության ղեկավարին՝ հետազոտված անձանց ամբուլատոր քարտերի առանձնացման և այդ անձանց կոնտակտային տվյալների ստացման նպատակով, որից հետո կատարվում է այցելություն, քարտերի վերանայում և զանգերի իրականացում:

Հետևանք

ԱԱՊ կազմակերպությունների ղեկավարներին ստուգման ծավալների, նպատակի և շրջանակների վերաբերյալ նախապես տեղյակ պահելը համարում ենք ռիսկային և անարդյունավետ

Տվյալ մշտադիտարկման մեխանիզմն անարդյունավետ է, քանի որ ԱԱՊ կազմակերպությունների ղեկավարներին ստուգման ծավալների, նպատակի և շրջանակների վերաբերյալ նախապես տեղյակ պահելը համարում ենք ռիսկային և անարդյունավետ միջոց՝ հաշվի առնելով, որ կազմակերպության ղեկավարները թերությունների վերացման և ամբողջությամբ քարտային տվյալները լրամշակելու հնարավորություն են ունենում:

Առաջարկ

Առաջարկում ենք մշակել և ներդնել մշտադիտարկման նոր արդյունավետ հսկողության համակարգ:

III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 17.05.2013թ. ստորագրվել է թիվ 5222-ԱՄ «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային և դրամաշնորհային ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) վերաբերյալ համաձայնագիրը՝ 43.3 մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ, որից 35 մլն. ԱՄՆ դոլարը տրամադրում է Համաշխարհային բանկը, իսկ 8.3 մլն. ԱՄՆ դոլարը ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումն է: Ծրագրի վերջնաժամկետը սահմանվել է 15.12.2019թ., որը երկարացվել է մինչև 30.06.2021թ.:

Վարկային ծրագրի հիմնական նպատակն է՝ բարելավել մոր և մանկան առողջության ծառայությունները՝ իրականացնելով առողջության առաջնային պահպանման մակարդակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում, վաղ հայտնաբերում և կառավարում, ինչպես նաև Առողջապահության նախարարության կողմից ընտրված հիվանդանոցների գործունեության արդյունավետության և որակի բարելավում:

Վարկային ծրագրի «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման բաղադրիչին» աջակցելու նպատակով Համաշխարհային բանկի Զարգացման միջազգային ընկերակցության կողմից տրամադրվել է նաև «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ TF 014138 դրամաշնորհը: Դրամաշնորհով իրականացվող ծրագրի բյուջեն կազմել է 1.8 մլն ԱՄՆ դոլար, որի նպատակն է միջոցները Ծրագրի գումարների հետ համամասնորեն ուղղել սքրինինգային հետազոտությունների և կատարողականի վրա հիմնված խրախուսական ֆինանսավորմանը:

Ստորև բերված աղյուսակում ըստ առանձին կատեգորիաների ներկայացված են Ծրագրով մինչև 30.09.2018թ.-ը նախատեսված, կատարված աշխատանքները և դրանց դիմաց փաստացի վճարումները:

ԱՄՆ դոլար

Հ/Հ	Կատեգորիաները	Ծրագրով նախատեսված ծախսերը	Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. կատարված աշխատանքները	Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. կատարված փաստացի ծախսերը
1	Շինարարական աշխատանքներ	19,595,000	8,457,504	7,864,328
2	Ապրանքների ձեռք բերում	18,597,359	18,059,096	16,964,942
3	Խորհրդատվական ծառայություններ	1,207,312	1,540,112	1,537,259
4	Կրթում/վերապատրաստում/	493,750	136,389	136,022
5	Այլ գործառնական ծախսեր(վարկ)	1,434,200	1,166,870	1,166,225
6	Կատարողականի վրա հիմնված ֆինանսական	1,937,903	1,136,172	1,137,993
	Ընդամենը	**43,265,524**	**30,496,143**	**28,806,767**

Ըստ տարիների՝ 2017թ. և 2018թ. հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ժամանակաշրջանի համար կատարված փաստացի ծախսերն ըստ կատեգորիաների՝

ԱՄՆ դոլար

Հ/Հ	Կատեգորիաները	2017թ.		01.01.2018թ. մինչև 30.09.2018թ.	
		Կատարված աշխատանքներ	**Փաստացի վճարումները**	**Կատարված աշխատանքներ**	**Փաստացի վճարումները**
1	Շինարարական աշխատանքներ	2,418,750.6	1,740,211.9	1,306,606.7	673,450.4
2	Ապրանքների ձեռք բերում	3,063,181.2	2,622,687.1	2,148,717.0	1,510,138.2
3	Խորհրդատվական ծառայություններ	200,434.3	200,335.0	124,687.4	120,702.8
4	Կրթում/վերապատրաստում/				
5	Այլ գործառնական ծախսեր	232,850.2	231,864.3	118,714.3	118,600.2
6	Կատարողականի վրա հիմնված ֆինանսական սխեմա	478,616.5	371,360.9	43,409.8	150,850.5
	Ընդամենը	**6,393,832.8**	**5,166,459.2**	**3,742,135.2**	**2,573,742.1**

Ծրագրով ծախսերը բաժանված են ըստ բաղադրիչների՝

«Ա» բաղադրիչ-Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում ԱԱՊ բուժհաստատություններում

«Բ» բաղադրիչ-Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում

«Գ» բաղադրիչ-Ծրագրի կառավարում

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են ծախսերն ըստ բաղադրիչների՝ ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. ընկած ժամանակահատվածի համար:

ԱՄՆ դոլար

Հ/Հ	Բաղադրիչները, ենթածրագրերը	Ծրագրով նախատեսված ծախսերը	Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. կատարված աշխատանքները	Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. կատարված փաստացի վճարումները
Ա	**Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում ԱԱՊ բուժհաստատություններում**	**2,640,524**	**2,093,882**	**2,103,692**
Բ	**Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում**	**38,900,800**	**26,988,920**	**25,316,387**
Բ1	**Լոռու մարզի հիվանդանոցային ցանցի արդիականացում**	**13,307,000**	**5,360,801**	**5,361,478**
	1.Շինարարական աշխատանքներ	8,100,000	621	618
	2. Ապրանքների ձեռք բերում	5,014,500	5,227,195	5,227,771
	3. Խորհրդատվական ծառայություններ	192,500	132,985	133,089
Բ2	**«Պրոֆեսոր Ռ.Հ.Յոլյանի անվան արդյունաբանական կենտրոն» ՓԲԸ արդիականացում**	**13,023,000**	**13,322,511**	**13,347,891**
	1.Շինարարական աշխատանքներ	7,400,000	3,360,503	3,406,306
	2. Ապրանքների ձեռք բերում	5,253,000	9,651,823	9,631,289
	3. Խորհրդատվական ծառայություններ	200,000	275,190	275,485
	4. Կրթում վերապատրաստում	170,000	34,994	34,811
Բ3	**Քաղցկեղի բուժման ծառայությունների արդիականացումը Հայաստանում**	**12,440,000**	**234,383**	**235,139**
	1.Շինարարական աշխատանքներ	4,005,000	-	-
	2. Ապրանքների ձեռք բերում	7,940,000	9,802	9,816
	3. Խորհրդատվական ծառայություններ	305,000	224,581	225,323
	4. Կրթում վերապատրաստում	190,000	-	-
Բ4	**Հիվանդանոցային ծառայությունների որակի բարելավում**	**130,800**	**8,071,225**	**6,371,878**
	1.Շինարարական աշխատանքներ	-	5,006,144	4,367,308
	2. Ապրանքների ձեռք բերում	-	2,517,369	1,468,820
	3. Խորհրդատվական ծառայություններ	130,800	547,712	535,751
Գ	**Ծրագրի կառավարում**	**1,724,200**	**1,413,341**	**1,386,688**

	1.Շինարարական աշխատանքներ	90,000	90,236	90,092
	2. Ապրանքների ձեռք բերում	132,500	123,421	97,543
	3. Խորհրդատվական ծառայություններ	67,500	32,814	32,825
	4. Այլ գործառնական ծախսեր	1,434,200	1,166,870	1,166,228
	Ընդամենը	**43,265,524**	**30,496,143**	**28,806,767**

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են փաստացի կատարված վճարումներն ըստ բաղադրիչների՝ 2017թ. և 2018թ. 9 ամիսների համար:

ԱՄՆ դոլար

Հ/Հ	Բաղադրիչները, ենթածրագրերը	2017թ. ընթացքում կատարված փաստացի վճարումներ	2018թ. 9 ամիսների ընթացքում կատարված փաստացի վճարումներ
Ա	**Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում ԱԱՊ բուժհաստատություններում**	**455,367.63**	**210,689.3**
Բ	**Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում**	**4,473,564.96**	**2,238,829.7**
Բ1	Լոռու մարզի հիվանդանոցային ցանցի արդիականացում	2,622,687.08	950,084.0
Բ4	Հիվանդանոցային ծառայությունների որակի բարելավում	1,850,877.88	1,288,745.8
Գ	**Ծրագրի կառավարում**	**237,526.58**	**124,223.0**
	Ընդամենը	**5,166,459.17**	**2,573,742.0**

2. ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարկային ծրագրով «Բ» բաղադրիչով նախատեսվել է Լոռու մարզի հիվանդանոցային ցանցի արդիականացում՝ 13,307,000 ԱՄՆ դոլարի չափով, որից «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ արդիականացման /նախագծային փաստաթղթերի մշակում, կառուցման շինարարական աշխատանքներ և բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների մատակարարում/ համար 11,347,000 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար՝ 180,000 ԱՄՆ դոլար, բժշկական սարքավորումների և կահույքի ձեռք բերման համար՝ 3,067,000 ԱՄՆ դոլար և կառուցման շինարարական աշխատանքների համար՝ 8,100,000 ԱՄՆ դոլար:

2015 թ.-ի ապրիլ ամսին վարկային ծրագրում կատարվել է փոփոխություն, կապված «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ շենքի կառուցման շինարարական աշխատանքների հետ: Ծրագրով շինարարական աշխատանքների համար նախատեսված 8.1 մլն. ԱՄՆ դոլարը չի ծախսվել, նշված աշխատանքները կատարվել են ՀՀ պետական բյուջեի հաշվին և կատարվել է նշված գումարի

վերաբաշխում «Ա» և «Բ» բաղադրիչների միջև: Մասնավորապես, «Ա» բաղադրիչին վերաբաշխվել է 727,000 ԱՄՆ դոլար և «Բ» բաղադրիչին՝ 7,373,000 ԱՄՆ դոլար, որից «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացման /նախագծային փաստաթղթերի մշակում, կառուցման շինարարական աշխատանքներ և բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների մատակարարում/ համար՝ 4,148,000 ԱՄՆ դոլար, «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացման /նախագծային փաստաթղթերի մշակում, կառուցման շինարարական աշխատանքներ և բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների մատակարարում/ համար՝ 2,450,000 ԱՄՆ դոլար և «Մեղրիի ԲԿ» ՓԲԸ՝ հագեցում սարքավորումներով, կահույքով և պարագաներով՝ 775,000 ԱՄՆ դոլար:

07.04.2018թ.-ին Վարկային ծրագրում կատարվել է երկրորդ փոփոխությունը: Վարկային ծրագրի 2.3 ենթաբաղադրիչի համար նախատեսված (Ճառագայթային բուժման մասնաշենքի կառուցման և հագեցման աշխատանքները, ներառյալ՝ դրա հետագա կառավարումը) 11.6 մլն. ԱՄՆ դոլարը վերաբաշխվել է այլ բաղադրիչների/ենթաբաղադրիչների վրա: Վերաբաշխվել է նաև Վարկային ծրագրով սքրինինգի կատարման համար նախատեսված ծախսերը, 1,227,500 ԱՄՆ դոլարի չափով, ընդամենը համաձայնագրի երկրորդ փոփոխությունով վերաբաշխվել է 12,465,000 ԱՄՆ դոլար: Մասնավորապես, Վարկային ծրագրի «Ա» բաղադրիչին վերաբաշխվել է 4,812,000՝ ԱՄՆ դոլար, «Բ» բաղադրիչին 6,820,000 ԱՄՆ դոլար, «Գ» բաղադրիչին 37,000 ԱՄՆ դոլար և չբաշխված գումարի մասը կազմել է 463,000 ԱՄՆ դոլար: «Բ» բաղադրիչին վերաբաշխված 6,820,000 ԱՄՆ դոլարը բաշխվել է հետևյալ ենթաբաղադրիչների միջև՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացում (կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, կառուցման շինարարական աշխատանքների կատարում և տեխնիկական հսկողություն, բժշկական սարքավորումների և բժշկական կահույքի մատակարարում)՝ 4,050,000 ԱՄՆ դոլար, ՀՀ «Վայոց ձորի մարզի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացում (կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, կառուցման շինարարական աշխատանքների կատարում և տեխնիկական հսկողություն, բժշկական սարքավորումների և բժշկական կահույքի մատակարարում)՝ 2,770,000 ԱՄՆ դոլար:

3. ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2013-2015թթ.-ին ՀՀ վերահսկիչ պալատի կողմից կատարվել են վերոնշյալ վարկային ծրագրերի տարբեր կատեգորիաներով իրականացված ծախսերի արդյունավետության և օրինականության շուրջ համապարփակ ուսումնասիրություններ, իսկ 2016թ. վերահսկողությամբ ընդգրկվել են նախորդ ուսումնասիրություններից դուրս մնացած հարցերն, ինչպես նաև ընտրանքային կարգով վարկային միջոցների ծախսման առանձին ուղղությունները:

Հաշվեքննության ընթացքում իրականացվել է ԱԾԻԳ–ի կողմից 10.05.2016թ. և 06.07.2016թ. (2017թ. և 2018թ. 9 ամիսների ընթացքում շինարարական աշխատանքների համար նոր մրցույթներ չեն անցկացվել) շինարարական աշխատանքների համար անցկացված մրցույթների

օրինականության և շինարարական աշխատանքների ընթացքի նկատմամբ ընթացիկ վերահսկողություն: Տվյալ վերահսկողության արդյունքներն ամփոփվել և հաստատվել են ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից:

4.ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարկային ծրագրով «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացման համար «սարքավորումների և կահույքի ձեռք բերում» կատեգորիայով նախատեսվել է 3,067,000 ԱՄՆ դոլար, «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի համար՝ 600,000 ԱՄՆ դոլար, «Արտաշատի ԲԿ» և «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ների համար՝ 1,670,000 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի համար՝ 920,000 ԱՄՆ դոլար և «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի համար՝ 750,000 ԱՄՆ դոլար:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է բժշկական սարքավորումների և կահույքի գնման, բաշխման, մատակարար կազմակերպությունների կողմից դրանց ներկրման արժեքների ու մատակարարման գների համեմատություններ, համադրվել են «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի ու «Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ներին նույն ծրագրով մատակարարված համանման ապրանքների միավորի գները, ինչպես նաև տեխնիկական բնութագրերը, համեմատվել են մրցույթին հայտ ներկայացրած հաղթած և չհաղթած կազմակերպությունների գնառաջարկները:

«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագրի «Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում» բաղադրիչի շրջանակներում «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի, «Արտաշատի ԲԿ» և «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ների արդիականացման համար բժշկական, ախտորոշիչ սարքավորումների, բժշկական պարագաների և բժշկական կահույքի մատակարարման, տեղադրման և ուսուցման նպատակով կազմակերպվել և անցկացվել են միջազգային մրցույթներ, իսկ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի արդիականացման համար բժշկական, ախտորոշիչ սարքավորումների, բժշկական պարագաների և բժշկական կահույքի մատակարարման, տեղադրման և ուսուցման նպատակով կազմակերպվել և անցկացվել են ազգային մրցույթներ: Միջազգային մրցույթներն անցկացվել են չորս առանձին լոտերի միջոցով, այդ թվում Լոտ 1՝ ախտորոշիչ սարքավորումներ, Լոտ 2՝ լաբորատոր սրքավորումներ, Լոտ 3՝ վիրաբուժական և հիվանդանոցային սարքավորումներ և Լոտ 4՝ բժշկական կահույք, ազգային մրցույթն անցկացվել է երկու առանձին լոտերի միջոցով՝ Լոտ 1՝ վիրաբուժական և հիվանդանոցային սարքավորումներ, Լոտ 2՝ բժշկական կահույք:

հազ. դրամ

Լոտ	Նախահաշվային արժեք	Հաղթող ճանաչված կազմակերպություն	
		Կազմակերպության անվանումը	**Առաջարկված գինը /տեղափոխման, տեղադրման և ուսուցման ծախսերը ներառյալ/**
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ			
1	643,508.9	«Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ և ՄԵՍ Հայաստան Ֆրանսիա» ՀՁ ՍՊԸ	615,600.0
2	39,949.2	«Ռոմա» ՍՊԸ	37,055.0
3	647,567.2	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ և «Ֆրեզեն» ՍՊԸ ՀՁ	*644,428.8*
4	161,819.4	«Ագաթ-777» ՍՊԸ	161,127.0
Ընդամենը	***1,492,844.7***		***1,458,210.8***
«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք			
1	288,000.0	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ	166,572.4
2		«Ձորաշեն» ՍՊԸ	57,228.1
Ընդամենը	***288,000.0***		***223,800.5***
«Արտաշատի ԲԿ» ՓԲԸ և «Սևանի ԲԿ» ՓԲԸ			
1	215,900.0	«Կոնցեռն- Էներգոմաշ» ՓԲԸ	251,052.0
2	50,765.3	«Փինգ Ֆլամինգո Գ և Ա. Կենտրոն» ՍՊԸ	37,551.2
3	314,680.6	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ	288,135.6
4	230,023.1	«Կոնցեռն- Էներգոմաշ» ՓԲԸ և «Տ-Ինասթրի» ՓԲԸ ՀՁ	198,255.7
Ընդամենը	***811,369.0***		***774,994.5***

5. «ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ» ԵՎ «ՍԵՎԱՆԻ ԲԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լոտ 1-ի համար ներկայացված մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել 4 կազմակերպություն: «Հայտերի գնահատման հաշվետվության և պայմանագրերի շնորհում ապրանքների գնում» ուղեկցող նամակ, գնահատման զեկույցի համաձայն «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ, «Տելիա-Մեդ» ՓԲԸ և «Ա-Մեդեք» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտերը մերժվել են: Նույն զեկույցի համաձայն հաղթող է ճանաչվել «Կոնցեռն- Էներգոմաշ» ՓԲ ընկերությունը **251.052.0 հազ դրամով** և 12.04.2018թ կնքվել է պայմանագիր:

«Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրենի 14.08.2018թ ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի տնօրենին ուղղված գրությամբ հայտնվել է, որ «Վարդանանց ԲԿ» ՓԲԸ–ի և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի միջև եղել է բանավոր

պայմանավորվածություն այն մասին, որ «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ում նախատեսվում է ծավալել համակարգչային շերտագրման ծառայություն, որի համար Լոտ 1-ով նախատեսված է եղել ձեռք բերել անխափան սնուցման սարք: 16.08.2018թ ԱԾԻԳ-ի տնօրենը 116/1 գրությամբ դիմել է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրենին, որով հայտնել է, որ վերոգրյալ համագործակցությունը /պայմանավորվածությունը/ ձախողվել է և անխափան սնուցման սարքը, որը նախատեսված է շերտագրի անվտանգ աշխատանքն ապահովելու համար այլևս նպատակահարմար չէ գնել և խնդրում է հանել սարքավորումը մատակարարման ենթակա սարքերի ցանկից: 20.08.2018թ կատարվել է պայմանագրի գումարի փոփոխություն 16,642.0 հազ. դրամի չափով, այդ թվում 16.550.0 հազ.դրամը որպես անխափան սնուցման սարքի արժեք, իսկ 92.0 հազ.դրամը որպես սարքավորման համար նախատեսված տեղափոխման և տեղադրման գումար: Արդյունքում՝ փոփոխված պայմանագրի գումարը կազմել է **234,442.0** հազ.դրամ:

Լոտ 2-ի համար ներկայացված մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել 3 կազմակերպություն: «Հայտերի գնահատման հաշվետվության և պայմանագրերի շնորհում ապրանքների գնում» ուղեկցող նամակ, գնահատման զեկույցի համաձայն «Տելիա-Մեդ» ՓԲԸ և «Ռոմա» ՍՊԸ ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտերը մերժվել են: Զեկույցի համաձայն հաղթող է ճանաչվել «Փինգ Ֆլամինգո Գ և Ա. Կենտրոն» ՍՊ ընկերությունը 37.551.2 հազ դրամով և 03.04.2018թ կնքվել է պայմանագիր: Ձեռքբերվող ապրանքների համար Ա ԾԻԳ-ի կողմից պահանջված և 2-րդ լոտի մասնակից «Ռոմա» ՍՊԸ-ի կողմից մրցույթին մասնակցելու համար առաջարկած տեխնիկական բնութագրերը գնահատող հանձնաժողովի կողմից տող առ տող գնահատվել են և հանձնաժողովի կողմից որևէ շեղում չի արձանագրվել: «Փինգ Ֆլամինգո Գ և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը հանձնաժողովի կողմից տող առ տող գնահատելիս հանձնաժողովն արձանագրել է շեղումներ: Մասնավորապես, «Արյան գազերի և էլեկտրոլիտների վերլուծիչի» համար մրցույթով պահանջվել է միանվագ քարտրիջով նախատեսված 100 տեսակի համար, սակայն հաղթող կազմակերպությունը ներկայացրել է անհատական օգտագործման քարտրիջով /սարքավորումը նշված շեղումով հետագայում կազմել է պայմանագրի մաս և մատակարարվել է կազմակերպության կողմից/, ջրային բաղնիքի, ջրի թորիչի, բինոկուլյար մանրադիտակի, լաբորատորային կշեռքի և տաք չոր օդային մանրէազտիչի 1-ական բաղադրիչ /որակի սերտիֆիկատ չի ներկայացվել / չի համակատասխանել մրցույթի պահանջներին, սակայն, այնուամենայնիվ, գնահատող հանձնաժողովը հաղթող է ճանաչել «Փինգ Ֆլամինգո Գ և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ին: Ընկերությունը ԱՆ ԾԻԳ-ին մատակարարել է 16 անվանում բժշկական սարքավորումներ: Մատակարարված ապրանքներից 4-ը (Բիոքիմիական վերլուծիչ, Կոագուլոմետր, Իմմունոֆերմենտային լվացող սարք, Ավտոկլավ) չեն համապատասխանել մրցույթով նախատեսված, սարքավորումների համար սահմանված տեխնիկական բնութագրերին, ինչի հետևանքով ԱՆ ԾԻԳ-ի կողմից չեն ընդունվել: Հետագայում տեխնիկական բնութագրերին համապատասխան, սակայն արդեն մոդելների մասով փոխված բժշկական սարքավորումներից 3-ը և 12 բժշկական սարքավորումները, համաձայն հաշվեքննությանը տրամադրված մաքսային հայտարարագրերի, ներկրվել են արտերկրից, իսկ 1-ը՝ Բժշկական լաբորատոր Բիոքիմիական վերլուծիչ // Semi-Automatic Chemistry Analyzer - Model BA88A, Mindray, China/՝ ձեռք բերվել տեղական շուկայից՝ ընդ որում

մրցույթի մասնակից «Ռոմա» ՍՊԸ-ից՝ 1,190.0 հազ. դրամով և հանձնվել է ԱՆ ԾԻԳ-ին 1,270.5 հազ. դրամով: Մինչդեռ, մրցույթին մասնակցած, սակայն հաղթող չճանացված «Ռոմա» ՍՊԸ-ն նույն բժշկական սարքավորման համար առաջարկել էր՝ 1,180.0 հազ դրամ:

Լոտ 3-ի համար ներկայացված մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել 4 կազմակերպություն: «Հայտերի գնահատման հաշվետվության և պայմանագրերի շնորհում ապրանքների գնում» ուղեկցող նամակ, գնահատման զեկույցի համաձայն «Մեդտեխսերվիս» ՍՊ և «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲ ընկերությունների ներկայացրած հայտերը մերժվել են՝ համարվելով անընդունելի: Ըստ զեկույցի, այդ հայտերն ունեցել են էական շեղումներ պահանջվող տեխնիկական պայմաններից, իսկ երրորդ կազմակերպության՝ «Ա-Մեդեք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, համարվելով մանրամասն դիտարկման համար անընդունելի: Նույն զեկույցի համաձայն հաղթող է ճանաչվել «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը՝ 288,135.6 հազ դրամով և 16.04.2018թ կնքվել է պայմանագիր:

4-րդ լոտի համար ներկայացված մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել 4 կազմակերպություն: «Հայտերի գնահատման հաշվետվության և պայմանագրերի շնորհում ապրանքների գնում» ուղեկցող նամակ, գնահատման զեկույցի համաձայն «Ագաթ 777» ԱՊԸ «Զորաշեն» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտերը մերժվել են գնի բարձր լինելու հետևանքով, իսկ «Մեդիմպեքս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է համարվելով էականորեն անհամապատասխան և մանրամասն դիտարկման համար անընդունելի /Համաձայն ցուցումներ հայտատուին ուղեցույցի համապատասխանաբար 14.6 և 14.2 կետերի/: Հաշվեքննությանը տրամադրված «Մեդիմպեքս» ՍՊԸ-ի մրցույթի փաթեթի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Մեդիմպեքս» ՍՊ ընկերությունը 15 անվանում ապրանքների գնի առաջարկ չի ներկայացրել: Նույն զեկույցի համաձայն հաղթող է ճանաչվել «Կոնցեռն- Էներգոմաշ» ՓԲԸ և «Տ-Ինասթրի» ՓԲԸ համատեղ ձեռնարկությունը 198,255.7 հազ.դրամով և 16.04.2018թ կնքվել է պայմանագիր:

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի մրցույթի 1-ին լոտի վերաբերյալ:

Վանաձոր մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի համար «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը CR4/B-G/017/1-17 պայմանագրի շրջանակներում պարտավորվել է մատակարարել ՈՒլտրաձայնային սարք գունավոր դոպլերով և 3 տվիչով//(3 probes) with printer- Model: S,40, Sonoscape Medical Corp., China: Սակայն 27.12.2017թ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ–ի կողմից ԾԻԳ-ին ներկայացված գրությամբ հայտնել են, որ իրենց մատակարարման ժամկետները երկարաձգվել են և վերոգրյալ սարքավորումը մրցույթի պահանջներին համամապատասխան մոդելով չի կարողանում մատակարարել: «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ –ն նույն գրությամբ ներկայացրել է նշված սարքավորման համարժեք տարբերակը՝ Model:Xario 200 with 3 probes, Toshiba Medical Sistems Corp. Japan, այն ԾԻԳ-ի կողմից ընդունվել է և մատակարարի կողմից առաքվել է կնքված պայմանագրի գումարի շրջանակներում:

Նույն պայմանագրի շրջանակներում ընկերությունը պարտավորվել է մատակարարել Լապարասկոպիկ հավաքածու//Laparoscopy set Olimpus Mediqal Sistems Corp. Japan: Սակայն 28.02.2018թ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ –ի կողմից ԾԻԳ-ին ներկայացված գրությամբ հայտնել են՝ Olimpus ընկերությունը ծանուցել է, որ նշված հավաքածուի բաղադրիչներից որոշները դուրս են եկել արտադրությունից և փոխարինվել են համարժեք այլ կոդերով: Այսպես, WA69222M և WA694442N կոդերով ապրանքները փոխարինվել են համապատասխանաբար WA64310C-ի, WA64210C-ի և FS-Y1901D կոդով նշված ապրանքը փոխարինվել է C271P4QPJEW–ով: Փոփոխությունը ԾԻԳ-ի կողմից ընդունվել է և մատակարարի կողմից այն առաքվել է կնքված պայմանագրի գումարի շրջանակներում:

<<Վանաձորի ԲԿ>> ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի համար անցկացված մրցույթի երկրորդ լոտին հայտեր են ներկայացրել երկու կազմակերպություններ, որոնց գնառաջարկներն, ըստ առանձին չափաբաժինների, ամբողջությամբ <<37 չափաբաժիններով>> համապատասխանում են մեկը մյուսին: Գնառաջարկի ցուցակներում առկա են թվաբանական սխալներ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի ուղղվել:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հիվանդությունների կանխարգելու և վերահսկում» ծրագրի նպատակներից է բարելավել մոր և մանկան առողջության ծառայությունները և առանձին ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը, վաղ հայտնաբերումը ու կառավարումը ԱԱՊ օղակում: Ծրագրի մի մասը կազմում է Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորումից հետևյալ սխեմայով՝

- փոխհատուցում ԱԱՊ հիմնարկներին համապատասխան սքրինինգային հետազոտություններ կատարելու համար.
- կատարողականի վրա հիմնված խրախուսման տրամադրում ԱԱՊ համապատասխան հիմնարկներին՝ փաստացի կատարողականի մակարդակի դիմաց:

Տվյալ ծրագիրը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության <Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի միջոցով:

Սքրինինգային ծրագիրը իրականացվում է հետևյալ հիվանդությունների կանխարգելման նպատակով.

Ծառայության անվանումը	Ծառայության գինը
Գլյուկոզայի որոշում	330 դրամ
Արգանդի վզիկից քսուքի ցիտոլոգիական հետազոտություն Պապա-Նիկոլաուի մեթոդով	1400 դրամ
Արգանդի վզիկից քսուքի վերցնումը	800 դրամ
Արգանդի վզիկից քսուքի նմուշի տեղափոխում	200 դրամ
Արյան (առանց լեյկոֆորմուլայի) և մեզի ընդհանուր քննություն սքրինինգի շրջանակներում ընդգրկված հղիներին /36-38 շաբաթական հղիների խումբ/	660 դրամ

01.01.2017թ. մինչև 30.09.2018թ. նշված ծրագրով իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

Ծառայության անվանումը	01.01.2017-31.12.2017թթ. իրականացված հետազոտություններ		01.01.2018-30.09.2018թ. իրականացված հետազոտություններ	
	քանակ	գումար /հազ.դրամ/	Քանակ	գումար /հազ.դրամ/
Գլյուկոզայի որոշում	122459	40,411.4	86354	28,496.8
Արգանդի վզիկից քսուքի ցիտոլոգիական հետազոտություն Պապա-Նիկոլաուի մեթոդով	59641	133,768.5	31580	44,212.0
Արգանդի վզիկից քսուքի վերցնումը			31514	25,211.2
Արգանդի վզիկից քսուքի նմուշի տեղափոխում			9345	1,869.0
Արյան (առանցլեյկոֆորմուլայի) և մեզի ընդհանուր քննություն սքրինինգի շրջանակներում ընդգրկված հղիներին /36-38 շաբաթական հղիների խումբ/	15763	10,403.5	11751	7,755.6
Ընդամենը		184,583.4		107,544.6

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության և պետական հիմնարկի միջև 26.12.2014թ. կնքված համաձայնագրի, ծրագրում ընդգրկված բժշկական հաստատություններին տրամադրվում է խրախուսական վարձատրություն՝ կիսամյակային կտրվածքով, հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարի 12.02.2013թ. N262-Ա հրամանի հիման վրա բժշկական հաստատությունների գործունեության ցուցանիշների արդյունքները: Վարձատրության տրամադրման համար հիմք է հանդիսանում ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետի և նախարարության աշխատակազմի ղեկավարի ստորագրությամբ ներկայացված կիսամյակային ագրերգացված հաշվետվությունը:

հազ. դրամ

	2017 բոնուս	2018 բոնուս /2017թ. երկրորդ կիսամյակի համար/
Վարկային միջոցներից (55%)	75,317.2	40,768.6
Դրամաշնորհի միջոցներից (45%)	61,623,.1	33,356.1
Ընդամենը	136,940.3	74,124.7

Նշենք նաև, որ բոնուսները մինչև 01.01.2018թ. հաշվարկվում և վճարվում էին կիսամյակային արդյունքներով, սակայն 2018թ. հաշվարկը իրականացվելու է տարեկան արդյունքներով:

Նշված ծառայությունները իրականացվում են ՀՀ 356 ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ իրականացնող կազմակերպությունների կողմից:

Սքրինինգային հետազոտություններն իրականացվում են բնակչության որոշակի տարիքային խմբի համար, օրինակ գլյուկոզայի որոշում՝ 35-68 տարիքային խումբ, արգանդի վզիկից քսուքի ցիտոլոգիական հետազոտություն Պապա-Նիկոլաուի մեթոդով՝ 30-60 կանանց տարիքային խումբ, արյան (առանց լեյկոֆորմուլայի) և մեզի ընդհանուր քննություն սքրինինգի շրջանակներում ընդգրկված հղիներին /36-38 շաբաթական հղիների խումբ/:

Խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ

2017-2018թթ. 9 ամիսների խորհրդատվական ծառայությունների համար ծախսվել է՝ հանրային իրազեկման արշավ՝ ներառյալ հեռուստատեսային, ռադիո և էլեկտրոնային այլ լրատվության միջոցով՝ 21,850.0 մլն. դրամ /վարկային միջոցներից 13,328.8, դրամաշնորհային միջոցներից՝ 8,521.5 մլն. դրամ/, հանրային քարոզարշավ՝ ներառյալ նյութերի տպագրություն և տարածում՝ 14,250.0 մլն. դրամ /վարկային միջոցներից 8,692.5 մլն. դրամ, դրամաշնորհային միջոցներից՝ 5,557.5 մլն. դրամ/:

Անհատ խորհրդատուների համար ծախսվել է 105,085.0, որից՝ վարկային միջոցներից 101,504.8 մլն. դրամ, դրամաշնորհային միջոցներից՝ 3,580.2 մլն. դրամ:

2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ պետական հիմնարկում պայմանագրային հիմունքներով աշխատում են 13 անհատ խորհրդատուներ: 01.01.2017թ-ից մինչև 30.09.2018թ-ը պետական հիմնարկից աշխատանքից ազատվել են 11 խորհրդատուներ:

Պետական հիմնարկի հաստիքների վերաբերյալ

Պետական հիմնարկում առկա են 14 հաստիքներ: 01.01.2017թ-ից մինչ 30.09.2018թ.-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքից ազատվել է 9 աշխատակից:

Սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնում և արձագանքում ծրագրի վերաբերյալ

ԱՄՆ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» կենտրոնի աջակցությամբ իրականացվող սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնում և արձագանքում դրամաշնորհային ծրագրի նպատակն է սեզոնային գրիպի համաճարակաբանական հսկողության համակարգի և լաբորատոր գործունեության պարբերաբար մշտադիտարկման և վերահսկման ծառայությունների ստեղծումը: Ծրագրով 2017թ. ֆինանսավորումը նախատեսվել է 27,808.6 հազ. դրամի չափով: Ծրագրի ֆինանսական կառավարիչ ԾԻԳ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների համաձայն 2017թ.-ին ծախսը կազմել է 24,561.0 հազ. դրամ, որից 5,143.4 հազ. դրամը ծախսվել է բժշկական սարքավորումների ձեռք բերման համար, իսկ 19,417.6 հազ. դրամը՝ քիմիական նյութերի ձեռք բերման համար:

Նշված սարքավորումների և քիմիական նյութերի ձեռք բերման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն հայտարարվել է մրցույթ, ըստ չափաբաժինների, որի արդյունքները ներկայացվում են ստորև՝

հազ. դրամ

Կազմակերպություն	Աշխատանքների նկարագրություն	Փաստացի վճարում
«Մեդտեխսերվիս» ՍՊԸ	Բժշկական սարքավորումների և գործիքների մատակարարում	260.0
«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	Բժշկական սարքավորումների և գործիքների մատակարարում	4,883.4
«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	Քիմիական նյութերի մատակարարում	2,578.5
«Էմ Դի Ընդ Դի Ըլայենս» ՍՊԸ	Քիմիական նյութերի մատակարարում	2,191.4
«Պրոմ Տեստ» ՍՊԸ	Քիմիական նյութերի մատակարարում	1,356.7
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	Քիմիական նյութերի մատակարարում	13,290.8
Ընդամենը		24,561.0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎԶՄԲ փոխառությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակում կատարվող ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցը» հայերեն տարբերակով պաշտոնապես թարգմանված չէ:

2 Մրցույթների գնահատումն առանձին չափաբաժիններով կատարելու դեպքում, անցկացված երեք մրցույթներով կտնտեսվեր ***184,441.6*** հազ. դրամ, այդ թվում՝ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի արդիականացման համար անցկացված մրցույթով՝ 18,353.3 հազ. դրամ, «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի մրցույթով՝ 37,409.7 հազ. դրամ, և «Սևանի ԲԿ» ու «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ների արդիականացման համար անցկացված մրցույթով՝ 131,179.0 հազ. դրամ:

3 Հաշվեքննության ընթացքում համեմատվել է 167 անվանում, /գումարով՝ 2,186,672.1 հազ. դրամի/ բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների գները մատակարարների կողմից ձեռք բերման գների հետ: Համեմատության արդյունքում պարզվել է, որ նշված 167 անվանում բժշկական սարքավորումները, կահույքը և պարագաները ձեռք են բերվել 1,339,403.4 հազ. դրամով: Ձեռք բերման և մատակարարման գների տարբերությունը կազմել է 847,269.0 հազ. դրամ կամ 63.25%:

4 Բժշկական հաստատություններին նախկինում մատակարարված սարքավորումների միավորի գները հաջորդող մրցույթների համար չեն սահմանվել որպես նախահաշվային գներ:

5

Գույքագրման օրվա դրությամբ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված երեք անվանում 28 հատ սարքավորումներից 9 հատ սարքավորումներն ընկերութ-յունում տեղադրված չէին: Մատակարարներին չտեղադրված սարքավորումների համար որպես տեղադրման և ուսուցման ծախս վճարվել էր 519.9 հազ. դրամ:

6

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված «Անգիոգրաֆիայի համալիրը» /գումարով՝ 268,186.1 հազ. դրամ/, և «Էլեկտրոնեյրոմիոգրաֆը» /գումարով՝ 7,394.4 հազ. դրամ/ համապատասխան մասնագետ չունենալու պատճառով գույքագրման օրվա դրությամբ դեռևս չէին շահագործվել:

7

Չհիմնավորված և միևնույն ժամանակ ձեռք բերման հաշվարկային մեծ գին ունեցող ԼՈՏ-ի ձևավորումը բազմապատկում է մրցույթին մասնակցության խոչընդոտները, քանի որ ավելացնում է հնարավոր մասնակցի ֆինանսատնտեսական և գործունեությանը վերաբերող մրցույթին մասնակցելու իրավունքի պահանջները, որը նվազեցնում է պատվիրատուի համար ավելի լավ առաջարկություններ ստանալու հնարավորությունները:

8

ԼՈՏ-երի ձևավորման պատշաճ հիմնավորումների բացակայությունը հանգեցրել է մրցույթին մասնակցելու համար կոնսորցիումներ ստեղծելու անհրաժեշտությանը, ինչն, իր հերթին, մրցունակության զարգացման և բյուջեի խնայման հարցերում խոչընդոտ է հանդիսացել:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. 2017-2018թթ. ընթացքում ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի կողմից կազմակերպված և անցկացված մրցույթներն առանձին չափաբաժիններով գնահատելու դեպքում կտնտեսվեր 184,441.6 հազ. դրամ:
2. Հաշվարկային մեծ գին ունեցող Լոտերի ձևավորումը բազմապատկում է մրցույթին մասնակցության խոչընդոտները, քանի որ ավելացնում է հնարավոր մասնակցի ֆինանսատնտեսական և գործունեությանը վերաբերող մրցույթին մասնակցելու իրավունքի պահանջները, որը նվազեցնում է պատվիրատուի համար ավելի լավ առաջարկություններ ստանալու հնարավորությունները:
3. 167 անվանում բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների ձեռք բերման և մատակարարման գների տարբերությունը կազմել է 847,169.0 հազ. դրամ կամ 63.3%:
4. Բժշկական հաստատություններին նախկինում մատակարարված սարքավորումների միավորի գները հաջորդող մրցույթների համար առանձին դեպքերում չեն սահմանվել որպես նախահաշվային գներ, որոնք էլ մրցույթի հաղթողին որոշելիս որևէ նշանակություն չեն ունենում: Գնումների գործընթացի այս մասը պատշաճ կարգավորված չէ և կոնկրետ նպատակի չի ծառայում: Արդյունքում, վարկային միջոցների հաշվին ԱԾԻԳ-ի կողմից ձեռք բերված սարքավորումների գները չեն բավարարում ՀԲ ուղեցույցի 1.2 կետում արտացոլված արդյունավետության և խնայողության դրույթներին:

Արդյունքում՝ չի պահպանվել հաշվեքննության առարկայի տնտեսման սկզբունքը, նվազագույնի չեն հասցվել «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագրով ընտրված հիվանդանոցների գործունեության արդյունավետության և որակի բարելավման նպատակով նախատեսված ռեսուրսներին ուղղված ծախսերը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Առողջապահության նախարարության «Առողջապահական Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին

1. Բժշկական սարքավորումների, պարագաների և բժշկական կահույքի միավորների նախահաշվային գները սահմանելիս՝ շուկայական ուսումնասիրությունից բացի հաշվի առնել նախորդ մրցույթների հաղթող ճանաչված, ինչպես նաև մրցույթներում հաղթող չճանաչված կազմակերպությունների կողմից ներկայացրած գնային առաջարկները:

2. Բժշկական սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել բավարար հիմնավորված և տրամաբանական, ինչպես նաև հաշվարկային մեծ գին ունեցող ԼՈՏ-երի համար ստեղծել անպիսի մրցակցային պայմաններ, որպեսզի մրցույթներին ներգրավվեն ավելի մեծ թվով մասնակիցներ:

3. Ձեռնարկել միջոցառումներ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված երեք անվանում 9 հատ չտեղադրված սարքավորումներն ընկերությունում տեղադրելու ուղղությամբ:

4. Պարզել «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին վարկային ծրագրով մատակարարված բժշկական սարքավորումներից «Անգիոգրաֆիայի համալիրը» և «Էլեկտրոնեյրոմիոգրաֆը» չշահագործելու պատճառները:

5. Վերանայել սքրինինգային ծրագրի շրջանակներում իրականացվող հետազորությունների ֆինանսավորման մեխանիզմները՝ ֆինանսավորել այնպիսի հետազոտություններ, որոնք ներառված չեն պետական պատվերի շրջանակներում:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Հաշվեքննիչ պալատի կողմից ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ ԱԾԻԳ) կողմից Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) ֆինանսավորմամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային թիվ 5222-ԱՄ ծրագրի (այսուհետ՝ Վարկային ծրագիր) հաշվեքննության արդյունքում 31.01.2019 թվականին ներայացված արձանագրություններով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ **ներկայացնում ենք պարզաբանումներ և առարկություններ հետևյալի շուրջ.**

1. «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ, «Սևանի ԲԿ» ՓԲԸ, «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ, ինչպես նաև «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ ծննդատան արդիականացման շրջանակներում <սարքավորումների ձեռքբերում> կատեգորիայով անցկացված մրցույթների և մատակարարված ապրանքների վերաբերյալ.

1.1 Նախահաշվային գների կազմման ճշտության վերաբերյալ պարզաբում ենք, որ.

Բոլոր 3 մրցույթների հաշվեքննության ընթացքում արձանագրությամբ քննարկվում է մրցույթներում ներառված նախահաշվային գների կազմման ճշտությունը: Նշվածի վերաբերյալ հայտնում ենք, որ ԱԾԻԳ-ը 1998 թվականից ՀԲ կողմից ֆինանսվորվող տարբեր ծրագրերի շրջանակներում հայտարարում է մրցույթներ բժշկական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումներ և կահույք ձեռքբերելու նպատակով: 20 տարվա փորձը վկայում է այն մասին, որ նախահաշվային գներ սահմանելու ամենանպատակահարմար տարբերակը նախորդ տարիներին ձեռքբերված նմանատիպ սարքավորումների գները հիմքում ունենալն է: Միաժամանակ, նախորդ տարիներին ձեռքբերված նմանատիպ սարքերի գները նախահաշվային գների հիմքում դնելուց բացի, հիմք են ընդունվում նաև տվյալ ժամանակահավածի ֆինանսական շուկայում առկա վիճակը՝ օրինակ գնաճը, արտարժույթի տատանումները: Այն դեպքերում, երբ ձեռքբերման համար նախատեսվող ապրանքը առկա չի եղել նախորդ տարիներին ձեռքբերվածների ցանկում, կատարվում է շուկայի ուսումնասիրություն, որի արդյունքում ստացված միջին արժեքը համարվում է նախահաշվային: Հարկ եմ համարում նշել նաև, որ ԱԾԻԳ-ը պարբերաբար ստուգումներ է անցնում և վերահսկվում է համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմինների կողմից (ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության, ՀՀ Վերահսկիչ/Հաշվեքննիչ պալատ), ստուգումների ընթացքում բազմիցս քննարկվել է նաև նախահաշվային գնի կազմման հարցը, ԱԾԻԳ կողմից կիրառվող տարբերակը երբեք չի վիճարկվել, հետևաբար, համարվել է հիմնավոր:

Միաժամանակ, հայտնում եմ, որ նախահաշվային գների սահմանման նպատակով շուկայի ուսումնասիրություն իրականացնելու անհրաժեշտությունը սահմանված է եղել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի «Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող գնումների ընթացքում ներկայացված հայտերը և (կամ) գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների կազմավորման ու գործունեության կարգը հաստատելու մասին» N 1356-Ն որոշմամբ: Այնուհետև, ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 105-Ն որոշմամբ շուկայի ուսումնասիրության և գնառաջարկների և շուկայական գների համեմատության վերաբերյալ դրույթները ճանաչվել են ուժը կորցրած, քանի որ համարվել է անարդյունավետ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթի պոտենցիալ մասնակիցները, որպես կանոն, չեն բացահայտում ապրանքների իրական գները: ԱԾԻԳ-ը ևս ունի շուկայի ուսումնասիրության որշակի փորձ, որը ցույց է տալիս, որ եթե անգամ մատակարարները պատասխանում են ներկայացված հարցմանը, ապա տրամադրվում են արհեստականորեն բարձրացված գներ, ինչը հանգեցնում է նախահաշվային գնի աճին, սակայն մրցույթի ընթացքում ներկայացվում են ավելի ցարծ գներ: Արդյունքում, հանգում ենք նրան, որ շուկայի ուսումնասիրությունը, որպես կանոն, չի արտացոլում ապրանքների իրական գները:

Հայտնում եմ նաև, որ նախահաշվային գները ընդամենը կողմնորոշիչ գներ են և, անհրաժեշտության դեպքում, ենթակա են փոփոխման՝ հաշվի առնելով մրցույթների արդյունքները:

1.2 Ապրանքների ձեռքբերման մրցույթներն առանձին չափաբաժիններով գնահատելու վերաբերյալ ներկայացվում են հետևյալ <u>առարկությունները.</u>

Բոլոր 3 մրցույթների ստուգման արդյունքում, արձանագրություններում տեղ գտած եզրահանգումը առ այն, որ մրցույթը՝ առանձին չափաբաժինների գնահատման պարագայում կտնտեսվեր զգալի գումար, կարծում ենք զուրկ է տնտեսագիտական և տրամաբանական որևէ հիմնավորումից, հաշվի առնելով հետևյալ փաստարկները.

ա/ ապրանքների խմբաքանակի ձեռքբերման դեպքում արտադրողները կիրառում են զեղչեր, որոնք չեն տրամադրվում ապրանքի մեկ միավորի ձեռքբերման դեպքում,

բ/ ապրանքները խմբաքանակով մատակարարելու դեպքում բեռնման, բեռնաթափման, տեղափոխման, ներմուծման հետ կապված ծախսերը հաշվարկվում են մեկ անգամ ամբողջ խմբաքանակի համար, ինչը էժանացնում է ինչպես հարակից ծախսերի գումարը, այնպես էլ ապրանքի գինը ի վերջո, մինչդեռ յուրաքանչյուր չափաբաժնի համար նշված ծախսերը հաշվարկելը թանկացնում է ապրանքի գինը,

գ/ չափաբաժիններով հայտարարված մրցույթները, որպես կանոն, կարող են չհետաքրքրել արտասահմանյան կազմակերպություններին, ինչի արդյունքում կնվազեն մրցույթներին ներկայացվող հայտերը,

դ/ առաջարկվող տարբերակը շատ բարդացնում է պայմանագրերի կառավարման, վերահսկման, և, հատկապես, երաշխիքային սպասարկման գործընթացը, քանի որ մեկ միավոր ապրանքի սպասարկումը կարող է ավելի թանկ արժենալ քան խմբաքանակինը:

Հայտնում եմ, որ ՀԲ ծրագրերի շրջանակներում չի կիրառվում մրցույթը չափաբաժիններով գնահատման պրակտիկա և չի խրախուսվում:

Հայտնում եմ նաև, որ բարձրացված խնդիրը քննարկվել է նաև մատակարարների հետ, որոնցից ստացված գրությունների համաձայն, չափաբաժիններով մրցույթների գնահատման դեպքում ապրանքների գները միանշանակ կաճեն շուրջ 10-15 տոկոսով: Միաժամանակ, հիմք ընդունելով Մրցութային փաստաթղթերի <Ցուցումներ հայտատուներին> բաժնի 34.2 ա. կետի պահանջները, հայտատուները տեղեկացված են եղել, որը հայտերի գնահատումը կիրականացվի ըստ <Առանձին Լոտերի>, հակառակ դեպքում՝ եթե գնահատումը իրականացվեր <Ըստ չափաբաժինների>, ակնհայտ է որ ապրանքի միավորի համար առաջարկված գները նույնը չէին կարող լինել, հաշվի առնելով վերը նշված փաստարկները: Դեռ ավելին ապրանքների ձեռքբերման գները կարող էին աճել նվազագույնը 10 տոկոսով:

Մատակարարի կազմակերպություններից ստացված գրությունները ներկայացվում են կից:

Միաժամանակ, «ՀԲ Փոխառուների կողմից ՎՀՄԲ փոխատվությունների և ՄՀԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակում կատարվող ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցի» 1.3 կետում նշված է, որ աշխատանքներ կամ ապրանքներ ձեռք բերելու համար ամենանպատակահարմար ընթացակարգը Միջազգային մրցույթի (ICB) ընթացակարգն է, որն էլ հիմնական դեպքերում խորհուրդ է տրվում կիրառել ՀԲ-ի կողմից:

Միջազգային մրցույթ անցկացնելու հիմնական նպատակը օտարերկյա կազմակերպությունների ներգրավումն է՝ ապահովելով մաքսիմալ մրցակցություն, ինչը հաշվի առնելով ԱԾԻԳ-ի փորձը, հնարավոր է միայն այն դեպքում, երբ արտասահմանյան կազմակերպությանը կառաջարկվի մատակարարել ոչ թե մեկ ապրանք, այլ ապրանքների խումբ: ԱԾԻԳ-ը մրցույթի ընտրության ժամանակ պարտավոր է հաշվի առնել նաև ՀԲ-ի կողմից սահմանված “մրցութային շեմերը/thresholds”, ինչը ևս հիմք է ծառայում մրցույթը միջազգային ֆորմատով հայտարարեու համար, իսկ դրա գնահատումը ըստ չափաբաժինների (item by item) նշանակում է մրցույթում սահմանափակել օտարերկյա կազմակերպությունների մասնակցությունը:

Միևնույն ժամանակ, ինչպես նշված է Ուղեցույցի 3.1 կետի 61-րդ ենթակետում, պայմանագիրը (հայտը) չպետք է բաժանվի ավելի փոքր մասերի, որպեսզի այն դառնա պակաս գրավիչ Միջազգային մրցույթ անցկացնելու համար (61. Contracts shall not be divided into smaller units in order to make them less attractive for ICB procedures):

1.3 **Ապրանքների մատակարարների/արտադրողի կողմից ձեռքբերման կամ ներմուծման և ԱԾԻԳ-ին վաճառքի գնի համեմատության արդյունքում արված եզրակացությունների մասին ներկայացնում ենք <u>առարկություններ.</u>**

Ինչպես հայտնի է, վաճառքի գինը գոյանում է ոչ միայն ապրանքը արտադրողից ձեռքբերելու և Հայաստան ներմուծելու արժեքից, այլ նաև Հայասատանում գանձվող մի շարք հարկերից, պարտադիր վճարներից, ապրանքի տեղափոխման, տեղադրման, ուսուցման վճարներից, միաժամանակ, վաճառքի գնի մեջ ներառվում են նաև ապրանքի երաշխիքային սպասարկման հետ կապված գումարները, պայմանագրի շրջանակներում ԱԾԻԳ կողմից պահանջվող մի շարք փաստաթղթերի, այդ թվում նաև բանկային երաշխիքների տրամադրմանն առնչվող՝ բանկերին վճարվող արժեքները, և, ի վերջո, վաճառողի շահույթը: Ուստի, տվյալ դեպքում, կարծում ենք, որ վերլուծությունը թերի է իրականացվել, և ապրանքների ձեռքբերման և ԱԾԻԳ-ին վաճառքի գների իրականան տարբերությունը հասկանալու համար, պետք է առնվազն ձեռքբերման գնի մեջ ներառվեին մատակարարի բոլոր վերը նշված ծախսերը: Այսպիսով, Մատարարարների իրական շահութաբերությունը բացահայտելու և արձանագրությամբ ներկայացված գների իրական տարբերությունը հասկանալու նպատակով, առաջարկում ենք վերլուծության մեջ հաշվի առնել ապրանքների ձեքբերման և մատակարարման համար ԱԾԻԳ մատակարարների կողմից իրականացվող բոլոր հարակից ծախսերը: Հայտնում եմ, որ նախկին ստուգումների ընթացքում նշված նպատակներով իրականացվում էր հանդիպակաց ստուգում:

Միաժամանակ, անհասկանալի է թե ինչ վերջնական նպատակ է հետապնդում արձանագրվածը, և ինչ առաջարկներ են դրան հետևում:

Այնուամենայնիվ, ՀՀ Հաշվեքննիչ պալատի ստուգող խմբի կողմից արված որոշ սարքերի /հեմոդիալիզ, ջրի մաքրման կայան, լապարասկոպիկ հավաքածու/ գների վերաբերյալ ուսումնասիրությունների մասին ԱԾԻԳ-ը տեղեկացրել է նաև մատակարարներին: Վերջիններիս կողմից ներկայացվել են պարզաբանումներ: Մասնավորապես՝ հեմոդիալիզի սարքերի և ջրի մաքրման կայանների մատակարար <Ֆրեզեն> ՍՊԸ կողմից պարզաբանվել է, որ վերջինիս շահույթը կազմել է 25 տոկոս: Նշված է նաև, որ ձեռքբերման արժեքի մեջ չի ներառվել ապրանքների Գերմանիայից ՀՀ տեղափոխման ծախսերը, ապահովագրության ծախսերը, հեմոդիալիզի բազկաթոռների տեխ. բնութագրերով պահանջվող կշեռքային մեխանիզմների ձեռք բերման և ներմուծման ծախսերը:

Ինչ վերաբերվում է <Ար. մեդտեխնիկա> ՍՊԸ կողմից մատակարարված լապարասկոպիկ հավաքածու գների տարբերությանը՝ ներմուծման արժեք 23,243.3 ՀՀ դրամ և վաճառքի արժեք՝ 102,500.00 ՀՀ դրամ, հայտնում եմ, որ համաձայն մատակարարի գրության, բացի վերը նշված ծախսերից, հաշվարկի մեջ չեն ներառվել նաև հավաքածուի մեջ ընդգրկված մի շարք սարքեր/պարագաներ, ինչը վկայում է այն մասին, որ հաշվարկը ևս թերի է, և արձանագրված **23,243.3 ՀՀ դրամի փոխարեն ձեռքբերման իրական արժեքը կազմել է 82,276.4 ՀՀ դրամ և վաճառվել է 102,500.00 ՀՀ դրամով**:

Կից՝ ներկայացվում է նաև <Ար. մեդտեխնիկա> ՍՊԸ գրությունը՝ համապատասխան ֆինանսական հիմքերով:

2. <u>«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ արդիականացման շրջանակներում <սարքավորումների ձեռքբերում> կատեգորիայով անցկացված մրցույթի և մատակարարված ապրանքների վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.</u>

2.1 Վարկային ծրագրի շրջանակներում «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ հագեցման նպատակով ՀԲ գնումների ընթացակարգերին համապատասխան՝ հաշվի առնելով նախատեսված նախահաշվային արժեքը և նպատակ ունենալով ապահովել հնարավորինս շատ մասնակիցների առկայություն, ինչը կհանգեցներ նաև առողջ մրցակցության, հայտարարվել է միջազգային մրցույթ 4 լոտով: Մրցույթին առաջարկներ ներկայացնելու հրավերը զետեղվել էր 2017թ. հունվարի 16-ին՝ "ՄԱԿ-ի Development Business" (առցանց) կայքում (https://www.devbusiness.com/ProjectViewer.aspx?ProjectID=70032&ProjectType=1), ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ի պաշտոնական կայքում (http://healthpiu.am/Procurement/current_goods_arm.html), ինչպես նաև www.gnumner.am (http://gnumner.am/am/category/129/1.html) կայքում: Ի հավելումն, հրավերը տրամադրվել էր ՀՀ-ում գտնվող մի շարք դեսպանատներին, հնարավոր միջազգային մասնակիցներ ներգրավելու նպատակով: Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող էր նաև անվճար բեռնվել www.gnumner.am կայքից:

Թիվ CR4/ICB/B-G/013-16 մրցույթին մասնակցելու նպատակով ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ից սահմանված կարգով մրցութային փաթեթներ էին ձեռք բերել հետևյալ 8 կազմակերպությունները՝

1 «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ (ՀՀ)
2 «ՄԵՍ Հայաստան Ֆրանսիա ՀՁ» ՍՊԸ (ՀՀ)
3 «Դիասերվ» ՍՊԸ(ՀՀ)
4 «Տելիա-Մեդ» ՓԲԸ (ՀՀ)
5 «ՄԲՆԵՏ» ԱԳ (Շվեցարիա)
6 «ԱՍԻԱ» (Ֆրանսիա)
7 «Պռոտոն Իմպէքս 2000» ՍՌԼ (Ռումինիա)
8 «Նովա Ինտերմեդ» (Ռումինիա)

Այսպիսով, կարելի է միանշանակ փաստել, որ մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվել է պատշաճ կերպով: ***Չնայած վերը նշվածին, մրցույթի երրորդ լոտի համար ԱԾԻԳ-ը ստացել է մեկ հայտ:*** Հիմք ընդունելով «Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎՀՄԲ փոխատվությունների և ՄՀԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակում կատարվող ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցի» 2.61-րդ կետը, նույնիսկ մեկ հայտ ստանալու դեպքում մրցութային պրոցեսը համարվում է բավարար, եթե պահպանվել են բոլոր ընթացակարգերը: Հայտնում եմ, որ ԱԾԻԳ-ի կողմից ոչ միայն պահպանվել են մասնակիցներ ներգրավվելու համար սահմանված ընթացակարգերը, այլ նաև լրացուցիչ քայլեր են արվել հնարավորինս շատ մասնակիցներ ներգրավելու նպատակով:

2.2. Վանաձորի ԲԿ և Սևան և Արտաշատ ԲԿ-ների համար ձեռք բերված բժշկական սարքավորումների և կահույքի գները համեմատելու հետ կապված, պարզաբանում եմ հետևյալը.

Վանաձորի ԲԿ-ն հագեցնելու նպատակով ապրանքների ձեռքբերման նպատակով գնումների պլանը փոփոխության է ենթարկվել և համապատասխան տող է ավելացվել 2016 թվականին, մինչ դեռ Սևան և Արտաշատ ԲԿ-ների համար բժշկական սարքավորումների և կահույքի գնումը պլանավորվել է 2017թ. /համեմատական աղուսյակում նշել են ապրանքների փաստացի մատակարարման տարեթվերը/: Տվյալ դեպքում 2 մրցույթները հայտարարվել են շուրջ 2 տարվա տարբերությամբ, և նախահաշվային գները սահմանելիս, հնարավոր չէր հաշվի չառնել մի շարք հանգամանքներ, ինչպես օրինակ շուկայում առկա արտարժութային տատանումները:

Հայտնում եմ նաև, որ նախահաշվայի գները ընդամենը կողմնորոշիչ գներ են և, անհրաժեշտության դեպքում, ենթակա են փոփոխման: Ապրանքների վերջնական գները որոշվում են մրցույթի ընթացքում կնքվող Պայմանագրով, տվյալ դեպքում նախահաշվային գները չեն կարող որևէ ազդեցություն ունենալ մրցույթի արդյուքների և դրա գնահատման վրա:

Ներկայացված աղուսյակում նախահաշվային գների տարբերությունը շատ փոքր է:

Ինչ վերաբերվում է 2015թ., 2016թ. և հետագա տարիներին բժշկական հաստատությունների արդիականացման նպատակով հայտարարված մրցույթներում՝ վիրաբուժական և հիվանդանոցային սարքավորումների մատարակարման մրցույթներում որպես հաղթող <Ար.Մեդտեխնիկա> ՍՊԸ-ին ճանաչելուն, հայտնում են, որ ՀԲ սահմանված ընթացակարգերին համաձայն հայտարարված միջազգային մրցույթները սահմանված կարգով գնահատելուց հետո նշված կազմակերպությունը բոլոր թվարկված դեպքերում ներկայացվել է ընդունելի մրցութային փաթեթ մաքսիմալ համապատասխան պահանջվող տեխնիկական բնութագրերով և նվազագույն գնով: Հետևաբար, առաջնորդվելով մրցութային պահանջներով՝ ընկերությունը ճանաչվել է հաղթող:

Միաժամանակ, թյուրըմբռնումից խուսափելու նպատակով, հայտնում եմ, որ 2015թ., 2016թ. և հետագա տարիներին հայտարարվել է ընդամենը մեկական մրցույթ՝ հիմնականում 4 ԼՈՏՈՎ:

2.3 Ստուգման շրջանակներում Վանաձորի ԲԿ-ում իրականացված գույքագրման արդյունքում անձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկացնում եմ.

ա/ *<շարժական ռենտգեն համակարգ>-ի մաս կազմող նկարահանող սարքավորումը 2017թ. արտադրության էր, իսկ սպող սարքը՝ 2011թ.:* Տվյալ մրցույթի գնման առարկա է հանդիսացել շարժական ռենտգեն համակարգը, որը պետք է արտադրված լիներ մրցույթը հայտարարելուց ոչ ավել քան 1 տարի առաջ: Նման պահանջը ներկայացված է եղել միայն սարքի մոդելի նկատմամբ: Տպող սարքի համար նման պահանջ չի եղել: Հետևաբար, տպող սարքը համարվել է համապատասխանող և ընդունվել է ընդունող Հանձնաժողովի կողմից:

բ/ *Մատակարարված թվով 10 նեգատոսկոպներից 4-ը տեղադրված չէին:* Համաձայն Վանաձորի ԲԿ տնօրենի 18.12.2018թ. թիվ 1667 գրության՝ նեգատոսկոպները եղել են կախված: Նեգատոսկոպների սահմանված կարգով տեղադրման հանգամանքը ֆիքսված է նաև ընդունման-հանձնման եռակողմ ստորագրված ակտով: Այնուհետև, անձնակազմի սենյակից սենյակ տեղափոխվելու հետևանքով, դրանք հանվել են, նշված ժամանակը համընկել է ստուգող խմբի այցի հետ: Ներկայում բոլոր նեգատոսկոպները կախված են և օգտագործվում են: **Վանաձորի ԲԿ տնօրինության գրությունը կցվում է:**

գ/ *Անգեոգրաֆիայի համալիրը չի օգտագործվում համապատասխան մասնագետ չունենալու պատճառով:* Բժշկական կենտրոնը շահագործման է հանձնվել միայն 2018թ. նոյեմբեր ամսին: Ներկայում, ԲԿ տնօրինությունը պարտավորություն է ստանձնել ապահովել անգեոգրաֆիայի վերապատրաստված մասնագետի առկայությունը, ինչի վերաբերյալ ակտիվ աշխատանքներ են տարվում Առողջապահության նախարարության և ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից: Համաձայն բանավոր տեղեկությունների՝ մասնագետն արդեն իսկ առկա է և վերապատրաստում է անցնում երևանյան բժշկական կազմակերպություններից մեկում: ԲԿ տնօրինության կանխատեսումներով, շուրջ 2 ամսից ծառայությունը կսկսի աշխատել: Միաժամանակ, ԱԾԻԳ-ը մատակարար կազմակերպությունից պարտավորագիր է պահանջել ԱԾԻԳ պահանջով ցանկացած պահի սարքավորման ուսուցում կազմակերպելու վերաբերյալ:

դ/ *Էլեկտրոնեյրոմիոգրաֆը չի օգտագործվում համապատասխան մասնագետ չունենալու հետևանքով:* Սարքավորման գնման նպատակով մրցույթի հայտարարաման պահին ԲԿ-ն ունեցել է համապատասխան մասնագետ: Սարքավորումը մատակարարվել է 2018թ. սկզբին: Տվյալ պահին տեղադրման և ուսուցման ընթացքում մասնագետը առկա էր: Այնուհետև, սակայն, մասնագետը դուրս է եկել աշխատանքից: Ներկայում ԲԿ-ն արդեն իսկ աշխատանքի է ընդունել նոր մասնագետի:

ե/ *Մատակարարված 15 հեմոդիալիզի սարքավորումից 3-ը տեղադրված չէ:*

Հիմք ընդունելով առողջապահության բնագավառում կիրառվող միջազգային պրակտիկան, հեմոդիալիզի սարքավորումը խորհուրդ չի տրվում շահագործել 2-ից ավել հերթափոխով 24 ժամվա ընթացքում /մեկ հերթափոխը՝ 4-5 ժամ աշխատացնում է արքավորումը/: Միաժամանակ, համաձայն գործող ստանդարտների՝ հեմոդիալիզի բաժանմունքում պետք է լինեն պահեստային հեմոդիալիզի սարքավորումներ՝ փաստացի օգտագործման պահին սարքավորման անսարքության ի հայտ գալու պարագայում պացիենտի բուժումը չընդհատելու նպատակով:

Մինչև 2018 թվականի նոյեմբերին Վանաձորի նորակառույց բժշկական կենտրոնի շահագործման հանձնելը, կենտրոնի նախկին մասնաշենքում ծավալված հեմոդիալիզի ծառայությունը սպասարկում էր շուրջ 58 հիվանդ՝ 3 հերթափոխով 9 (1 պահեստային սարքավորում) սարքի կիրառմամբ, իսկ 2018 թվականի սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին ծառայությունն անցել էր 4 հերթափոխով աշխատանքային ռեժիմի՝ մեկ հեմոդիալիզի սարքի անսարքության պատճառով 8 (1 պահեստային սարքավորում): Հարկ է նշել նաև, որ հեմոդիալիզի կարիք ունեցող հիվանդների թիվը գերազանցում էր գործող ծառայության հզորության հնարավորությունները, և հիվանդները ստիպված էին մեկնելու Երևան (9) և Գյումրի (2) քաղաքներ՝ հեմոդիալիզային բուժում ստանալու նպատակով:

Ներկայում Վանաձորի նորակառույց բժշկական կենտրոնի հեմոդիալիզի ծառայությունը սպասարկում է 65 հիվանդ՝ 3 հերթափոխով 12 (1 պահեստային սարքավորում) սարքի կիրառմամբ: Վանաձորի հեմոդիալիզի ծառայության որակը բարելավելու և տարածաշրջանի բոլոր հիվանդների համար հասանելիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել ծառայության հնարավորությունները: Նշվածը հնարավոր կլինի իրականացնել միայն հավելյալ սարքեր և համապատասխան տարածք ունենալու պարագայում: Ներկայում ԲԿ տնօրինությունը արդեն իսկ միջոցներ է ձեռնարկում տարածքները հարմարացնելու և հեմոդիալիզի ծառայությունը ընդլայնելու համար, որտեղ նախատեսվում է օգտագործել ՀԲ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում ԱԾԻԳ ՊՀ կողմից տրամադրված առկա ևս երկու հեմոդիալիզի սարք /(1-ը պետք է մշտական հիմունքներով պահվի որպես պահեստային սարքավորում)/: Նշվածը տարածաշրջանի բոլոր հիվանդներին հնարավորություն կընձեռնվի բուժումը ստանալ իրենց բնակավայրերին մոտ՝ 3 հերթափոխով, իսկ որոշ դեպքերում նաև 2 հերթափոխով, որն ավելի է համապատասխանում ընդունված միջազգային չափորոշիչներին:

Մատակարարված, սակայն տվյալ պահին չօգտագործվող սարքավորումները կարգաբերված են և պատրաստ են շահագործման: Միաժամանակ, առկա է մատակարարի պարտավորագիրը ցանկացած պահի ուսուցում և տեղադրում իրականացնելու համար:
զ/ *Մատակարարված 3 հեռուստացույցից 2-ը տեղադրված չէ:* Հիմք ընդունելով Վանաձորի ԲԿ տնօրենի 18.12.2018թ. թիվ 1667 գրությունը, հեռուստացույցները տեղադրված են: Հեռուստացույցների տեղադրման արժեքը կազմում է ընդամենը 1000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուրի համար:

3. <u>«Սևանի ԲԿ» և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ արդիականացման շրջանակներում <սարքավորումների ձեռքբերում> կատեգորիայով անցկացված մրցույթի և մատակարարված բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների վերաբերյալ.</u>

3.1 ՀՀ Արարատի մարզի Արտաշատի բժշկական կենտրոնում նախատեսվում էր ծավալել համակարգչային շերտագրման ծառայություն՝ համագործակցելով <Վարդանանց բժշկական կենտրոն> ՓԲԸ հետ: Ծառայության բացման նպատակով անհրաժեշտ էր շերտագիր, որը տրամադրելու էր մասնավոր կազմակերպությունը, և անխափան սնուցման սարք, որը պետք է ձեռք բերվեր վարկային ծրագրի շրջանակներում: Համաձայն՝ Արտաշատի ԲԿ տնօրեի 14.08.2018թ. գրության՝ համագործակցությունը ձախողվել է: Ուստի, վարկային ծրագրի շրջանակներում ձեռքբերման ենթակա անխափան սնուցման սարքի մատակարարումը աննպատակահարմար էր: Հետևաբար, ԱԾԻԳ-ը դիմել է մատակարարին, մատակարարման ենթակա սարքերի ցանկից նշված սարքը հանելու նպատակով: Նշվածի վերաբերյալ ստորագրվել է պայմանագրի փոփոխություն, ինչի արդյունքում պայմանագրային գինը նվազել է 16,550,000 ՀՀ դրամով: Համապատասխան գրությունները տրամադրվել են ստուգող խմբին:

3.2 ա/ Արձանագրությամբ նշվել է, որ «Բժշկական և ախտորոշիչ սարքավորումների, բժշկական պարագաների և բժշկական կահույքի ձեռքբերում «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի համար, բաղկացած 4 լոտից (Միջազգային մրցույթ՝ թիվ CR4/ICB/B-G/018-17) հայտերի գնահատման հաշվետվություն և պայմանագրերի շնորհման նամակով մերժվել է **2-րդ Լոտին** (Լաբորատոր սարքավորումներ) հայտ ներկայացրած Ռոմա ՍՊԸ-ի առաջարկը, և դրա մասին չի արձանագրվել: Նշվածի վերաբերյալ **պարզաբանում եմ,** որ Մրցույթի գնահատման հաշվետվությամբ, որը տրամադրվել է նաև Հաշվեքննիչ պալատի ստուգող խմբին, չեն արձանագրվել մերժման հիմքերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռոմա ՍՊԸ-ի հայտը չի մերժվել: Ավելին, արձանագրությամբ նշված է, որ հայտն ընդունելի է, ամբողջապես համապատասխանում է մրցութային պահանջներին և ենթակա է մանրամասն դիտարկման, հետևաբար, հայտը սահմանված կարգով ընդունվել է: Համաձայն ընթացակարգի՝ Ռոմա ՍՊԸ-ն հաղթող չի ճանաչվել ամենացածր գին չառաջարկելու պատճառով:

բ/ Արձանագրությամբ նշվում է նաև, որ հայտարարված մրցույթի **նույն 2-րդ Լոտի** շրջանակներում՝ «Փինք Ֆլամինգո Գ և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի հայտն ընդունվել է հաշվի չառնելով գնահատող Հանձնաժողովի կողմից արձանագրված շեղումները: Նշվածի վերաբերյալ **պարզաբանում եմ,** որ մասնակցի առաջարկում առկա ոչ էական շեղումների մասին նշվել է նաև գնահատման հաշվետության մեջ, որը ևս տրամադրվել է ստուգող խմբին: Մասնավորապես, առկա բոլոր շեղումները, ներառյալ՝ Արյան գազերի և էլեկտրոլիտների վերլուծիչ սարքի մասով առկա շեղումները, Հանձնաժողովի կողմից համարվել են ոչ էական, քանի որ դրանք չէին կարող ազդել սարքի աշխատունակության պայմանների և արդյունքի վրա: Նշված շեղումները չեն համարվել և չէին կարող համարվել էական հիմք ընդունելով Մրցութային փաթեթի Ցուցումներ հայտատուներին (Ընդհանուր) 29.2 կետով սահմանված դրույթը առ այն, որ էական շեղում կամ բաց թողում են համարվում այն դեպքերը, երբ

Ա) Ընդունվելու դեպքում, այն կարող է՝ (ա) էականորեն ազդել պայմանագրով սահմանված մատուցվող Ծառայությունների կամ ձեռքբերված Ապրանքի որակի վրա; կամ (բ) Մրցութային փաստաթղթերի հետ չհամապատասխանող որևէ եղանակով էականորեն սահմանափակում է մրցութային փաստաթղթերով նախատեսված Գնորդի իրավունքները կամ Հայտատուի պարտավորությունները կամ Բ) Եթե ընդունվում է, կարող է հանգեցնել ոչ արդար մրցակցության, մյուս՝ մրցութային պայմաններին համապատասխանող Հայտատուների հանդեպ:

Այսպիսով, տվյալ դեպքում կիրառված <ոչ էական շեղման> դրույթը հստակ արձանագրված է ՀԲ ընթացակարգերով և լիովին իրավաչափ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ էական անհամապատասխանությունները չեն ազդում/փոխում սարքի ֆունցիոնալ նշանակությունը:

Ուստի, արձանագրված տեխնիկական շեղումն, ինչպես նաև պայմանագիրը կնքելուց հետո ներկայացրած սերտիֆիկտը, չեն կարող համարվել էական շեղում, հետևաբար, «Փինք Ֆլամինգո Գ և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից հայտը ընդունվել է, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներկայացված գնառաջարկը եղել է ամենացածրը և ըստ էության մրցութային պահանջներին բավարարող:

գ/Արձանագրությամբ նշվել է, որ «Բժշկական և ախտորոշիչ սարքավորումների, բժշկական պարագաների և բժշկական կահույքի ձեռքբերում «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի համար, բաղկացած 4 լոտից (Միջազգային մրցույթ՝ թիվ CR4/ICB/B-G/018-17) հայտերի գնահատման հաշվետվություն և պայմանագրերի շնորհման նամակով մանրամասն դիտարկման համար անընդունելի է համարվել **3-րդ Լոտին** (Վիրաբուժական և Հիվանդանոցային) հայտ ներկայացրած «Ա-Մեդեք» ՍՊԸ (Արաբական միացյալ էմիրություններ)-ի առաջարկը: Նշվածի վերաբերյալ **պարզաբանում եմ,** որ Մրցույթի գնահատման հաշվետվությամբ, որը տրամադրվել է նաև Հաշվեքննիչ պալատի ստուգող խմբին, նշված է, որ հայտն ընդունելի է և ամբողջապես համապատասխանում է մրցութային պահանջներին: Համաձայն ընթացակարգի՝ «Ա-Մեդեք» ՍՊԸ-ն հաղթող չի ճանաչվել ամենացածր գին չառաջարկելու պատճառով:

4. <u>«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ ծննդատան արդիականացման շրջանակներում <սարքավորումների ձեռքբերում> կատեգորիայով անցկացված մրցույթի և մատակարարված ապրանքների վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.</u>

Արձանագրությամբ նշված է, որ Հանձնաժողովի կողմից չի իրականացվել թվաբանական սխալների ուղղում, ինչը չի համապատասխանում իրականությանը; Մասնավորապես՝ գնահատման արձանագրության <Նախնական ստուգում> բաժնում նշված է, որ Գնահատումն իրականացվել է ՑՀ 31 (Ի Բաժին) կետին համաձայն (Մրցութային փաթեթ- Ի Բաժին՝ Ցուցումներ հայտատուներին-Ա. Ընդհանուր ցուցումներ- 31.Թվաբանական սխալների ուղղում): Ստուգող խմբի կողմից արձանագրված սխալմունքը արտացոլված է եղել ներկայացված գնացուցակի 6-րդ սյունակում /Միավոր տողի արժեքը /EXWարժեքը/, որը թվաբանանակ ճշտումներ կատարելիս չի կարող հաշվի առնվել:

Մասնակիցների կողմից ներկայացված Գնացուցակը (համաձայն հրավերի) կազմված է ստորև նշված 9 սյունակից.

1	2	3	4	5	6	7	8	9
N°	Ապրանքների նկարագրություն	Քանակ	Ֆիզիկական ծավալը	Միավորի արժեքը «Վերջնական առաքման վայր տեղափոխված»*	Միավոր տողի արժեքը /EXWարժեքը/**	Յուրաքանչյուր տողի միավորի արժեքը ցամաքային տեղափոխության և Գնորդի երկրում Ապրանքները վերջնակետ հասցնելու համար պահանջվող այլ ծառայությունների համար	Վաճառքի հարկերը, միավոր արժեքի համար, պայմանագրի շնորհման դեպքում, համաձայն ՑՀ14.8(ա)(ii) դրույթի	Յուրաքանչյուր տողի ապրանքի ընդամենը գինը (Սյուն 3X5)

Համաձայն մրցութային փաթեթի ՑՀ 31՝ եթե միավորի գնի և տվյալ տողում ընդամենը գնի/որը ստացվում է միավորի գնի և քանակի բազմապատկմամբ/ միջև կա անհամապատասխանություն, պետք է առաջնորդվել միավորի գնով և ուղղել տվյալ տողի ընդամենը գինը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 5-րդ սյունակում նշված միավորի արժեքը պարունակում է ցամաքային տեղափոխման արժեքը, այսինքն համարվում է միավորի վերջնական գին, գների ճշգրտում իրականացնելու համար հիմք պետք է ընդունել հենց 5-րդ սյունակում նշված արժեքն, ինչն էլ արվել է՝ 3x5: Այսպիսով, հակառակ պնդման, թվաբանական ճշտումն իրականացվել է:

5. <u>Սքրինինգային ծրագրի և խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ</u>

2015թ.-ի հունվարի 1-ից «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային և համանուն դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում (հիպերտոնիայի և շաքարային դիաբետի կանխարգելիչ հետազոտություններ կանանց և տղամարդկանց 35-68, իսկ արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով՝ կանանց 30-60 տարիքային խմբերում) իրականացվում է կազմակերպված և լայնամասշտաբ սքրինինգներ՝ ուղղված այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը: Սքրինինգային հետազոտությունների նպատակը հիվանդությունների վաղ կանխարգելումն է առանց հիվանդությունների որևէ կլինիկական դրսևորման: «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի, ինչպես նաև ամբողջ աշխարհում իրականացվող սքրինինգային ծրագրերի հիմնական նպատակն առողջ բնակչության ներգրավումն է:

Ստուգող խմբի կողմից որպես խնդիր է արձանագրվել այն հանգամանքը, որ սքրինինգային ծրագրում ընդգրկված տարիքային խմբին մատուցված և ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ծառայությունները ընդգրկված են նաև պետության կողմից ֆինանսավորվող ծառայությունների շրջանակներում: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պարզաբանման՝ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունում տվյալ ամսում գրանցված մեկ անձի հաշվով տարբերակված գներում ներառված են միայն բժշկական ցուցումներով իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները:

Հարկ է նշել, որ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունում տվյալ ամսում գրանցված մեկ անձի հաշվով տարբերակված գներում ներառված բժշկական ցուցումով լաբորատոր-գործիքային հինգ ախտորոշիչ հետազոտություններից միայն «գլյուկոզայի որոշում» հետազոտությունն է ներառված «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրով ֆինանսավորվող հետազոտությունների մեջ:

Ինչ վերաբերվում է աքրինինգային հետազոտությունների մշտադիտարկմանը, ապա այն իրականացվում է ոչ միայն այցելությունների ժամանակ բժշկական քարտերի վերանայմամբ, այլ նաև այցելությունից հետո հեռախոսազանգերի միջոցով՝ հետազոտությունների վերջնական օգտագործողներից ճշգրտվում է հետազոտության փաստացի կատարումը: Մշտադիտարկման արդյունքներն ամփոփվում են ամսական հաշվետվությունում, որտեղ գնահատվում է հաստատությունների ռիսկայնության աստիճանը: Ռիսկայնության գնահատման համար կիրառվում են ամբուլատոր քարտի ցուցանիշը (ամբուլատոր քարտերի քանակը, որտեղ բացակայում է գլյուկոմետրիայի հետազոտության գրառումը՝ բացակայող ամբուլատոր քարտերի քանակի հետ միասին) և իրականացված զանգերի ցուցանիշը (զանգերի ժամանակ հետազոտության մասնակցության հաստատումը հարցվողների կողմից ընտրված ամբուլատոր քարտերից զանգերի համար հատկացված սխալ/անհասանելի համարների քանակի հետ միասին):

Այսպիսով, մշտադիտարկման արդյունքները չեն հիմնվում միայն այցելությունների արդյունքների վրա, և հաստատությունների ղեկավարների կողմից հնարավոր թերությունների վերացումն ազդեցություն չի ունենում հաստատությունների ռիսկայնության գնահատման վրա, քանի որ զուգորդվում է ծառայությունը ստացողի կողմից փաստի հավաստմամբ:

2019թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում բուժհաստատություններ այցելությունները կիրականացվեն առաջարկվող սկզբունքի հիման վրա՝ առանց բժշկական հաստատությանը նախապես տեղեկացնելու, որի արդյունքների ամփոփումից հետո կգնահատվի մեխանիզմի արդյունավետությունը՝

ժամանակա-ծախսատարության և բուժհաստատությունների բնականոն աշխատանքի կազմակերպման և չխոչընդոտման տեսակետից:

Կից՝ ներկայացվում է նաև ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալության համապատասխան գրությունը: